Գիրքը հրատարակվել է ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հովանավորությամբ

ՀՀ դատավորների միությունը շնորհակալություն է հայտնում ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտին, ՀՀ իրավաբանների միությանը, Զարգացման հայկական ինստիտուտին իրենց առաջարկություններով ու դիտողություններով ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի ստեղծմանն աջակցելու համար

Ընտանեկան հանրամատչելի գրադարանի շարքի մյուս հրատարակություններին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ՀՀ դատավորների միության ինտերնետային կայքէջ հետևյալ հասցեներով՝

www.datavor.am

www.judge.am

ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ARTUR CHAKHOYAN

MARRIAGE AND FAMILY LAW

FAMILY LAW MANUAL

Edited by: Hrachik SARGSYAN
Lingvo-stylistic editor: Armine NAZARYAN

Yerevan
«Antares»
2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիր՝ **Հրաչիկ ՄԱՐԳՍՅԱՆ**
Լեզվառճական
խմբագիր՝ **Արմինե ՆԱԶԱՐՅԱՆ**

Երևան
«Անտարես»
2012

ՀՏԴ 347.6 (479.25) (07)
ԳՄԴ 67.99 (2Հ)4 g7

Չ 166

Տպագրվում է
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ

Չախոյան Արթուր

Չ 166 Ամուսնություն և ընտանիք/ Արթուր Չախոյան; ՀՀ դատավորների միություն; Խմբ.՝ Հրաչիկ ՍԱՐԳՍՅԱՆ .- Եր.: Անտարես, 2011.- 124 էջ:

Ձեռնարկում համակարգված և հանրամատչելի եղանակով ներկայացված են ամուսնարնտանեկան իրավունքներին վերաբերող հիմնահարցերը, ինչպես նաև այս բնագավառում ՀՀ օրենսդրությունն ու դատական պրակտիկան:

ՀՏԴ 347.6 (479.25) (07)
ԳՄԴ 67.99 (2Հ)4 g7

ISBN 978–9939–51–366–9

© ՀՀ դատավորների միություն, 2012
© Սարգսյան Հրաչիկ, 2012
© Չախոյան Արթուր, 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին I
Ամուսնություն

Գլուխ 1
Ամուսնության և ընտանիքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը 10
Ամուսնության և ընտանիքի վերաբերյալ ինչ է սահմանում ՀՀ Սահմանադրությունը.....10
Ինչ է սահմանում ՀՀ ընտանեկան օրենսգիրքը.....11
Ինչ է սահմանում «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքը 13
Ամուսնական և ընտանեկան հարաբերություններն ուրիշ ինչ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով են կարգավորվում 14

Գլուխ 2
Ամուսնության հասկացությունը, կնքումն ու դադարումը 16
Ինչ է ամուսնությունը.....16
Ինչպես է կնքվում ամուսնությունը.....17
Ամուսնության կնքման համար ինչ պայմաններ են անհրաժեշտ 18
Պարտադիր է, արդյոք, ամուսնացող անձանց բժշկական հետազոտությունը.....19
Ինչ պետք է հասկանալ ամուսնության դադարում ասելով.....20
Որոնք են ամուսնության դադարման հիմքերը.....20
Ինչ կարգով է կատարվում ամուսնալուծությունը.....21
Որ դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով 21
Ամուսնալուծվելիս ամուսինների միջև ծագող վեճերն ինչպես են քննարկվում 22
Որ պահից է ամուսնությունը համարվում դադարած 23
Ինչ է ամուսնության անվավերությունը 23

Գլուխ 3
Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները և կարգը 26
Որ մարմիններն են իրականացնում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում 26
Ինչպես է իրականացվում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումը.....27
Ինչ է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականը.....29
Երբ է քաղաքացուն տրամադրվում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ 30
Որ դեպքերում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում.....31
Որ դեպքերում է մերժվում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը.....31
Որոնք են ծննդի պետական գրանցման հիմքերը 32
Որտեղ է կատարվում ծննդի պետական գրանցումը.....33
Ինչպես է կատարվում ծննդի պետական գրանցման ժամանակ երեխայի ծննդի անվան, հայրանվան և ազգանվան գրառումը 36
Ինչպես է կատարվում գտնված (ընկեցիկ) երեխայի և մահացած ծնված կամ կյանքի չորս շաբաթվա ընթացքում մահացած ծննդի պետական գրանցումը 36
Ծննդի ակտի գրառման մեջ ինչ տեղեկություններ են լրացվում 38
Ինչպես է գրանցվում ամուսնությունը..... 39

Գլուխ 4
Ամուսնալուծության պետական գրանցումը 44
Որոնք են ամուսնալուծության պետական գրանցման հիմքերը 44
Ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության դեպքում ինչ կարգով է գրանցվում այն 44
Ամուսիններից մեկի դիմումի հիման վրա ինչ կարգով է գրանցվում ամուսնալուծությունը 45

Ինչ կարգով է գրանցվում ամուսնալուծությունը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա 47
Ինչ տեղեկություններ է պարունակում ամուսնալուծության վկայականը 47

Գլուխ 5
Հայրության որոշման պետական գրանցումը 48
Որոնք են հայրության որոշման պետական գրանցման հիմքերը 48
Ինչպես է կատարվում հայրության որոշման պետական գրանցումը երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա 48
Ինչպես է կատարվում երեխայի ծննդյան պահին երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող հոր դիմումի համաձայն՝ հայրության որոշման պետական գրանցումը 50
Ինչպես է կատարվում չափահաս անձի նկատմամբ հայրության որոշման պետական գրանցումը.....51
Ինչպես է կատարվում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա հայրության որոշման պետական գրանցումը 51
Ինչ տեղեկություններ է պարունակում հայրության որոշման վկայականը 53
Ինչպես են կատարվում հայրության որոշման կապակցությամբ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ փոփոխությունները.....53

Բաժին II

Ընտանիք

Գլուխ 1
Ընտանեկան հարաբերություններ.....54
Ինչ է ընտանիքը.....54
Ամուսինները հավասար են, արդյոք, ընտանիքում 56
Ինչ է ամուսնական պայմանագիրը և ինչպես է այն կնքվում..... 56

Գլուխ 2
Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները.....59
Որն է ծնողների և երեխաների իրավունքների ու պարտականությունների ծագման հիմքը.....59
Ծնողներն ունեն, արդյոք, հավասար իրավունքներ ու պարտականություններ 60
Ովքեր կարող են իրականացնել երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը 61
Երբ են ծնողները զրկվում ծնողական իրավունքներից.....63
Երբ կարող են վերականգնվել ծնողական իրավունքները 65

Գլուխ 3
Ընտանիքի անդամների ալիմենտային պարտավորությունները.....68
Ծնողները պարտավոր են, արդյոք, հոգալու իրենց երեխաների ապրուստը 68
Որքան կարող է լինել երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը 68
Աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են, արդյոք, պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին 70

Գլուխ 4
Ամուսինների, նախկին ամուսինների և ընտանիքի մյուս անդամների ալիմենտային պարտավորությունները 72
Ամուսիններն ունեն, արդյոք, միմյանց ապրուստի միջոցները հոգալու պարտականություններ.....72
Ամուսինն իրավունք ունի, արդյոք, ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուց ալիմենտ ստանալու իրավունք 72
Ընտանիքի անդամներն ինչ ալիմենտային պարտականություններ ունեն միմյանց նկատմամբ.....73
Ինչպես է կնքվում ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը 75

Ինչ կարգով է վճարվում և բռնագանձվում ալիմենտը 76
Ինչպես է որոշվում ալիմենտային պարտքը 78
Կարող է, արդյոք, փոփոխվել դատարանի սահմանած
ալիմենտի չափը 79
Երբ կարող են դադարել ալիմենտային պարտավորությունները ..80

Գլուխ 5
Խնամատար ընտանիք 81
Ինչ է խնամատար ընտանիքը 81
Ովքեր են դաստիարակության համար երեխային ընտանիք
հանձնելու մասին պայմանագրի կողմերը 82
Ովքեր կարող են լինել խնամատար ծնողներ 83
Երբ է դադարում երեխաներին դաստիարակության համար
ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը 84
Որ երեխաները չեն կարող հանձնվել խնամատար
ընտանիքին 85

Բաժին III

Հրամաններ և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ

Գլուխ 1
ՀՀ Արդարադատության նախարարի «2» ապրիլի 2003թ.
N 153-Ն հրամանը «ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ
ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 87

Գլուխ 2
ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ 91

Բաժին I. Ամուսնություն

Գլուխ 1

Ամուսնության և ընտանիքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

Ամուսնության և ընտանիքի վերաբերյալ ինչ է սահմանում ՀՀ Սահմանադրությունը

Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև իրավական այլ ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ընտանեկան օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Մեր պետության Հիմնական օրենքը լայն երաշխիքներ է սահմանում ամուսնական և ընտանեկան հարաբերությունների համար: Ինչպես սահմանում է ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածը՝ «Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է:

Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք»:

Իսկ 34 և 36-րդ հոդվածներն էլ համապատասխանաբար ամրագրել են, որ՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»: «Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար»:

ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածն ամրագրել է, որ՝ «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»: Սա վերաբերում է նաև ամուսնական և ընտանեկան հարաբերություններում տղամարդու և կնոջ լիակատար իրավահավասարությանը:

Ինչ է սահմանում ՀՀ ընտանեկան օրենսգիրքը

ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի նոյեմբերի 9-ին և գործողության մեջ է դրվել պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո, այսինքն՝ 2005 թվականի ապրիլի 20-ից:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ամուսնական և ընտանեկան կապերից բխող հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտ է և սահմանում է ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, կարգավորում է անձնական ոչ

գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների), իսկ ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և շրջանակներում՝ մյուս ազգականների և այլ անձանց միջև, ինչպես նաև որոշում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքում տեղավորելու ձևերն ու կարգը:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ընդգրկում է 153 հոդված և բաղկացած է ութ բաժիններից՝ Ընդհանուր դրույթներ, Ամուսնության կնքումը և դադարումը, Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, Ծնողների ու զավակների իրավունքներն ու պարտականությունները, Ընտանիքի անդամների ալիմենտային պարտավորությունները, Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության ձևերը, Ընտանեկան օրենսդրության կիրառումը օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցությամբ ընտանեկան հարաբերությունների նկատմամբ, Եզրափակիչ և անցումային դրույթներ: ՀՀ ընտանեկան օրենսգրքի բոլոր հիմնական ինստիտուտները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, միջազգային իրավական նորմերին:

Ընտանեկան օրենսգիրքը ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանեկան հարաբերությունները փոխադարձ սիրո ու հարգանքի վրա կառուցելու, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանեկան գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, ընտանիքում երեխաների դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից: Ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի դրույթների՝ կանայք և տղամարդիկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից: Ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է տղամարդու և կնոջ ամուսնական դաշինքի կամավորության, ընտանիքում ամուսինների իրավունքների հավասարության, ընտանեկան հարցերը

փոխադարձ համաձայնությամբ լուծելու, նրանց բարեկեցության մասին հոգատարության, ընտանիքի անչափահաս և անաշխատունակ անդամների իրավունքների և շահերի առաջնային պաշտպանությունն ապահովելու սկզբունքներին համապատասխան: Արգելվում է ամուսնանալիս և ընտանեկան հարաբերություններում սոցիալական, ռասայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության հատկանիշներով քաղաքացիների իրավունքների որևէ սահմանափակում: Քաղաքացիների իրավունքներն ամուսնանալիս և ընտանիքում կարող են սահմանափակվել միայն օրենքով և միայն այնքանով, որքանով այդ սահմանափակումը անհրաժեշտ է անձանց պատվի ու բարի համբավի, ընտանիքի այլ անդամների և այլոց առողջության, ազատության, իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար:

Ինչ է սահմանում «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքը

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2004 թ. դեկտեմբերի 8-ին և գործողության մեջ է մտել 2005թ. ապրիլի 20-ին: Այդ օրենքը բաղկացած է 86 հոդվածներից, որոնք դասակարգված են 14 գլուխներում:

Նշված օրենքով կարգավորվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրառումներն ուղղելու, լրացնելու, փոփոխելու, վերականգնելու և չեղյալ հայտարարելու, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը) կազմելու և պահպանելու կարգի ու ժամկետների և դրանց հետ կապված այլ հարաբերություններ, ինչպես նաև սահմանվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմինների իրավասությունները:

Քաղաքացիական կացության ակտերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և իրավական այլ ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Քաղաքացիական կացության ակտերը քաղաքացիների այնպիսի գործողությունները կամ դեպքերն են, որոնք առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում են նրանց իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև բնութագրում են քաղաքացիների իրավական վիճակը:

Պետական գրանցման ենթակա են քաղաքացիական կացության հետևյալ ակտերը.

ա) ծնունդը,
բ) ամուսնությունը,
գ) ամուսնալուծությունը,
դ) որդեգրումը,
ե) հայրությունը որոշելը,
զ) անվան փոխումը,
է) մահը:

Ամուսնական և ընտանեկան հարաբերություններն ուրիշ ինչ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով են կարգավորվում

Ամուսնությանը և ընտանիքին վերաբերող հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ մյուս օրենսգրքերով՝ և առաջին հերթին ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Օրինակ՝ ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ամուսիններին թույլատրում է կնքել ամուսնական պայմանագիր, որը քաղաքացիական-իրավական պայմանագիր է: Իսկ նման պայմանագիր կնքելու կարգը, դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, այն դադարեցնելու հիմքերն ու կարգը, ինչպես նաև կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են դարձյալ քաղաքացիական օրենսգրքով:

Կամ՝ դատարանը կարող է ամուսնական պայմանագիրն անվավեր ճանաչել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ գործարքների անվավերության մասին քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով կամ այլ հիմքերով:

Ընտանեկան հարաբերություններում ամուսնությունը կեղծ լինելու հիմքով անվավեր ճանաչվելու դեպքում բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահանջելու իրեն պատճառված գույքային վնասը հատուցել քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ընտանիքի անդամներին իրավունք է տալիս համաձայնություն կայացնել ապրուստի միջոց՝ ալիմենտ վճարելու կարգի, պայմանների, ալիմենտի չափերի և դրանց առնչվող հարցերի շուրջ: Այս բնույթի համաձայնությունը ևս պետք է կայացվի քաղաքացիական օրենսգրքի՝ գործարքներին վերաբերող կանոններով, իհարկե, հաշվի առնելով նման համաձայնության բնույթն ու առանձնահատկությունները:

Ամուսնաընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորման հարցերն անմիջականորեն կապվում են քաղաքացիական դատավարության օրենսդրության հետ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ են լուծվում ամուսնաընտանեկան հարաբերություններից բխող բոլոր վիճելի հարցերը:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը բազմաթիվ հոդվածներ է պարունակում ամուսնության և ընտանիքի ոլորտին վերաբերող հասարակական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Այդ հոդվածների հիման վրա ՀՀ իրավասու մարմիններն ընդունել կամ ընդունելու են համապատասխան նորմատիվային ակտեր: Դրանք առաջին հերթին ՀՀ կառավարության որոշումներն են: Իսկ այդ որոշումները, որպես կանոն, ընդունվում են ընտանեկան հարաբերությունները կարգավորող օրենքները կենսագործելու հետ կապված հարցերը լուծելու համար:

Գլուխ 2

Ամուսնության հասկացությունը, կնքումն ու դադարումը

Ինչ է ամուսնությունը

Ամուսնությունը բարդ սոցիալական երևույթ է, որը գտնվում է ոչ միայն իրավական, այլև էթիկական, բարոյական նորմերի, ինչպես նաև տնտեսական օրենքների ազդեցության տակ:

Ամուսնությունը տղամարդու և կնոջ փոխադարձ սիրո, հարգանքի և փոխըմբռնման վրա հիմնված և իրավաբանորեն ձևակերպված դաշինքն է՝ ընտանիք ստեղծելու, նրանց համար փոխադարձ անձնական և գույքային իրավունքներ ու պարտականություններ առաջացնելու նպատակով, այն տղամարդու և կնոջ ազատ ու կամավոր դաշինք է, նրանցից յուրաքանչյուրի համար բնական անհրաժեշտություն՝ մարդկանց բազմանալու բնական և օրինական ճանապարհը:

Ըստ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսդրության՝ ոչ ոք իրավունք չունի իր կամքը թելադրել տղամարդուն կամ կնոջը՝ ամուսնանալու կամ չամուսնանալու: Դա նշանակում է, որ ամուսնությունը նախևառաջ պետք է հիմնված լինի ամուսնացողների ազատ ու կամավոր սիրո վրա: Կյանքն ապացուցել է, որ միայն տղամարդու և կնոջ իրական սիրո վրա հիմնված ամուսնությունն է ի վիճակի ապահովել իսկական ընտանեկան երջանկություն: Ամուսնության հիմքում ընկած են փոխադարձ սերը, ճշմարիտ բարեկամությունը և հարգանքը՝ որպես ընտանեկան հարաբերությունների կառուցման բարոյական սկզբունքներ: Ամուսնության արդյունքում երեխաներ ունենալն ու նրանց դաստիարակության կազմակերպումն ընտանիքը դարձնում են բովանդակալից:

Ամուսնություն կարող է համարվել տղամարդու և կնոջ այնպիսի դաշինքը, որը, հիմնվելով ամուսնացողների ազատության ու կամավորության վրա, ուղղված է ընտանիք կազմելուն, և այն պետք է ձևակերպված լինի օրենքով սահմանված կարգով:

Ամուսնության գրանցումն ունի նաև ապացուցողական նշանակություն: Այսինքն՝ ամուսնության առկայությունը կարող է ապացուցվել միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմնի կողմից տրված ամուսնության վկայականով: Ամուսնութ-

յան վկայականն ամուսնության գրանցման բավարար և հավաստի ապացույց է: Հայաստանի Հանրապետությունում չգրանցված, այսպես կոչված՝ փաստական ամուսնությունը չի ճանաչվում, ուստի այն իրավական հետևանքներ չի առաջացնում:

Հայաստանի Հանրապետությունում ամուսնության գրանցումը սահմանված է ինչպես պետական և հասարակական շահերը նկատի ունենալով, այնպես էլ ամուսինների և զավակների անձնական ու գույքային իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակով: Ամուսնության գրանցումը դաստիարակչական ներգործություն է ունենում ամուսինների վրա՝ նրանց գիտակցության մեջ ամրապնդելով պետության պաշտպանության ներքո գտնվող ամուսնական դաշինքի կայունության գաղափարը: Այն նաև նպաստում է ընտանիքի հանդեպ պատասխանատվության զգացումի բարձրացմանը:

Ամուսնությունը կարելի է բնութագրել որպես տղամարդու և կնոջ ազատ, կամավոր և իրավահավասար դաշինք, որը կնքվելով պետության կողմից սահմանված կարգով՝ ամուսնացողների համար առաջացնում է փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ և ստեղծում է ընտանիք՝ երեխաներ ունենալու և դաստիարակելու համար:

Ինչպես է կնքվում ամուսնությունը

Ամուսնությունը կնքվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ:

Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից: Ամուսնության գրանցման կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով: Ամուսնության պետական գրանցման համար հիմք է հանդիսանում ամուսնացող անձանց համատեղ դիմումը:

Ամուսնության պետական գրանցումը կատարվում է ամուսնացողներից մեկի բնակության վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից: Ամուսնությունը տեղի է ունենում ամուս-

նանալ ցանկացողների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմնին դիմում տալու օրվանից հետո, բայց երեք ամսից ոչ ուշ: Սակայն հարգելի պատճառների առկայության դեպքում ամուսնացող անձանց խնդրանքով կարող է կրճատվել սահմանված մեկամսյա ժամկետը: Այդ դեպքում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում ամուսնության պետական գրանցումը կատարվում է դիմումում նշված օրը, բայց ոչ շուտ, քան դիմում տալուց հետո եռօրյա ժամկետում: Տվյալ դեպքի համար հարգելի համարվող պատճառների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

Ամուսնության կնքման համար ինչ պայմաններ են անհրաժեշտ

Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի՝ կանանց համար՝ տասնյոթ, իսկ տղամարդկանց համար տասնութ տարեկան տարիքի հասնելը:

Արգելվում է ամուսնություն կնքել՝

1) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ: ՀՀ գործող ընտանեկան օրենսդրությունն ամուսնությունն արգելող հանգամանք է համարում ամուսնացողներից թեկուզ մեկի՝ արդեն այլ ամուսնության մեջ գտնվելը: Սա առավել ևս հասկանալի է, քանի որ ընտանեկան իրավունքի կարևոր սկզբունքներից մեկը մենամուսնությունն է: Հայաստանում միշտ էլ ճանաչվել է մենամուսնությունը, մերժվել է երկկնությունը և բազմակնությունը.
2) մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև: Ամուսնության այս արգելքն առաջին հերթին ունի կենսաբանական ծագում: Մերձավոր ազգականների միջև ամուսնությունը ոչ միայն հակասում է բարոյականության նորմերին ու հասարակական-բարոյական պատկերացումներին, այլև անթույլատրելի է կենսաբանական նկատառումներով: Մերձավոր ազգակցությունը կարող է հասցնել մի շարք ժառանգական

հիվանդությունների փոխանցման: Մերձազգակցական ամուսնությունների դեպքում 24-48 տոկոսով ավելի շատ են ի ծնե այլանդակները, անկենդան ծնված երեխաները և նորածինների մահացությունները.

3) որդեգրողների և որդեգրվածների միջև: Որդեգրողի ու որդեգրվածի միջև, որպես կանոն, արյունակցական կապ չի լինում: Նրանց միջև ամուսնությունն արգելելը բացառապես հետապնդում է բարոյական նպատակ: Որդեգրողի և որդեգրվածի միջև ամուսնության արգելքն ունի ոչ թե կենսաբանական, այլ սոցիալական հիմնավորում: Որդեգրումը, որը ծնողականին նմանակող հարաբերության ստեղծում է, նույնպես համարվում է ամուսնության բարոյական արգելք: Այդ իսկ պատճառով անթույլատրելի պետք է համարել ամուսնությունը նաև որդեգրվածի և նրան որդեգրած անձի (անձանց) զավակների միջև, քանի որ նրանք ըստ էության հանդես են գալիս եղբոր ու քրոջ կարգավիճակում.

4) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ:

Պարտադիր է, արդյոք, ամուսնացող անձանց բժշկական հետազոտությունը

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ ամուսնացող անձանց բժշկական հետազոտությունը, ինչպես նաև բժշկագենետիկական և ընտանիքի պլանավորման հարցերով խորհրդատվությունն անցկացնում են առողջապահական կազմակերպությունները՝ պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում ամուսնացող անձանց ցանկությամբ:

Ամուսնացող անձի հետազոտության արդյունքները համարվում են բժշկական գաղտնիք: Այդ արդյունքները հետազոտություն անցած անձի համաձայնությամբ կարող են հաղորդվել այն անձին, որի հետ նա մտադիր է ամուսնանալ:

Եթե ամուսնացած անձը մյուս ամուսնուց թաքցրել է ամուսնության պետական գրանցման պահին իր մոտ սեռավարակի (ընդ որում՝ մարդու իմունային անբավարարության վիրուսի), ինչպես նաև հոգեկան հիվանդության և թմրամոլության, թունամոլության առկայության

փաստը, ապա մյուս ամուսինն իրավունք ունի ամուսնությունն անվավեր ճանաչելու համար դիմելու դատարան:

Ամուսնանալ ցանկացող անձանց կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնին հասցեագրված դիմումից պետք է հետևի, որ ամուսնացողները փոխադարձաբար տեղյակ են միմյանց առողջական վիճակի մասին: Սա պարզապես հիշեցնում է ամուսնացողներին, որ նրանք պարտավոր են իմանալ մեկը մյուսի առողջական վիճակի մասին: Ամուսնացողների կողմից մեկը մյուսի առողջական վիճակի մասին անտեղյակությունը կարող է առաջացնել անցանկալի հետևանքներ (մեկը մյուսին ծանր ինֆեկցիոն հիվանդություններով վարակում, հիվանդ երեխայի ծնունդ և այլն):

Ամուսնացող անձի բժշկական հետազոտությունը, ինչպես նաև բժշկագենետիկական և ընտանիքի պլանավորման հարցերով խորհրդատվությունն անցկացվում է անվճար, պետության հաշվին և միայն ամուսնացող անձանց համաձայնությամբ:

Ինչ պետք է հասկանալ ամուսնության դադարում ասելով

Ամուսնության դադարումը տղամարդու և կնոջ միջև ամուսնության հետևանքով առաջացած հարաբերությունների արդյունքում ձեռք բերված իրավունքների ու պարտականությունների, դադարումն է: Ամուսնությունը դադարում է միայն օրենքով նախատեսված հիմքերով ու կարգով:

Ամուսնությունը դադարում է միայն որոշակի իրավաբանական փաստերի, կոնկրետ հիմքերի վրա հասնելու դեպքում: Այդ փաստերն են՝ ամուսիններից մեկի մահը, ամուսիններից մեկին տեսականորեն անհայտ բացակա լինելու պատճառով դատական կարգով մահացած հայտարարելը, ամուսնությունն անվավեր ճանաչելը, ինչպես նաև ապահարզանը:

Որոնք են ամուսնության դադարման հիմքերը

Ամուսնությունը դադարում է ամուսիններից մեկի մահվան կամ նրան դատարանի կողմից մահացած ճանաչելու հետևանքով:

Ամուսնությունը կարող է դադարել ամուսնալուծության միջոցով՝ ամուսինների կամ ամուսիններից մեկի դիմումի հիման վրա, ինչպես

նաև դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի դիմումի հիման վրա:

Ամուսինը, առանց կնոջ համաձայնության, իրավունք չունի ամուսնալուծության դիմում ներկայացնելու կնոջ հղիության ընթացքում:

Ինչ կարգով է կատարվում ամուսնալուծությունը

Ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսված դեպքերում և օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

Ամուսինների միջև ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում նրանց ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում:

Ամուսիններից մեկի դիմումի հիման վրա ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում, եթե մյուս ամուսինը՝

ա) դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող.

բ) դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ.

գ) դատապարտվել է ազատազրկման՝ երեք տարուց ոչ պակաս ժամկետով:

Ամուսինների ընդհանուր գույքի բաժանման, անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոցը հոգալու վերաբերյալ վեճերը, ինչպես նաև երեխաների պատճառով ամուսինների միջև ծագող վեճերը քննարկվում են դատական կարգով՝ անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնությունը լուծելուց՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված կարգով:

Որ դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով

Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը.

բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց.

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար և իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև երեքամսյա ժամկետ:

Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար:

Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ մեկամսյա ժամկետում:

Ամուսնալուծվելիս ամուսինների միջև ծագող վեճերն ինչպես են քննարկվում

Դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին և (կամ) անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին:

Ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝

ա) որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները.

բ) որոշել, թե որ ծնողից և ինչ չափով պետք է ալիմենտ (ապրուստավճար) բռնագանձվի.

գ) ամուսինների (ամուսիններից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը.

դ) ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով որոշել այդ միջոցների չափը:

Եթե գույքի բաժանումը շոշափում է երրորդ անձանց շահերը, ապա դատարանը կարող է գույքի բաժանման մասին պահանջն առանձնացնել որպես առանձին վարույթ:

Որ պահից է ամուսնությունը համարվում դադարած

Ամուսնությունը, որը լուծվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնում, համարվում է դադարած ամուսնալուծության պետական գրանցման պահից:

Ամուսնությունը, որը լուծվում է դատական կարգով, համարվում է դադարած դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Դատարանն ամուսնալուծության մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել ամուսնության պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

Դատական կարգով կատարված ամուսնալուծությունը ենթակա է պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ամուսնալուծված ամուսինների նոր ամուսնության պետական գրանցում չի կատարվում առանց ամուսնալուծության վկայականի առկայության:

Դատարանի կողմից մահացած կամ անհայտ բացակայող ճանաչված ամուսնու ներկայանալու և դատարանի համապատասխան վճռի վերանայման դեպքում ամուսինների համատեղ դիմումի հիման վրա ամուսնությունը կարող է վերականգնել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինը, բացառությամբ այն դեպքերի, երբ մյուս ամուսինը սահմանված կարգով նոր ամուսնություն է կնքել:

Ինչ է ամուսնության անվավերությունը

Ամուսնաընտանեկան օրենսդրությամբ սահմանված պայմանների խախտումով կնքված ամուսնությունը, ինչպես նաև այն ամուսնությունը, որը չնայած կնքվել է օրենքի պահանջների լրիվ պահպանմամբ, սակայն առանց ընտանիք կազմելու մտադրության (կեղծ ամուսնություն), կարող է ճանաչվել անվավեր:

Ամուսնությունն անվավեր է ճանաչվում դատական կարգով: Օրենքը դատարաններին իրավունք է տալիս ամուսնությունն անվավեր ճանաչել և ոչ թե պարտավորեցնում է օրենքով նախատեսված պայմանների խախտումով կնքված ամեն մի ամուսնություն անառարկելիորեն համարել անվավեր:

Դատարանն ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել ամուսնության պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին: Ամուսնությունն անվավեր է ճանաչվում դրա պետական գրանցման պահից:

Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեն՝

ա) անչափահաս ամուսինը, նրա ծնողները (օրինական ներկայացուցիչները), խնամակալության և հոգաբարձության մարմինը, եթե ամուսնությունը կնքվել է ամուսնական տարիքի չհասած անձի հետ: Անչափահաս ամուսնու տասնութ տարին լրանալուց հետո ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունի միայն այդ ամուսինը.

բ) ամուսինը, որի իրավունքները ամուսնության կնքմամբ խախտվել են, եթե ամուսնությունը կատարվել է ամուսիններից մեկի կամավոր համաձայնության բացակայության դեպքում՝ հարկադրանքի, խաբեության, մոլորության կամ ամուսնության պետական գրանցման պահին իր գործողությունները գիտակցելու և դրանք ղեկավարելու անհնարինության արդյունքով.

գ) ամուսինը, որը չի իմացել ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքների առկայության մասին, դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալը, նախորդ չամուսնալուծված ամուսնության մեջ գտնվող ամուսինը, այլ անձինք,

որոնց իրավունքները խախտվել են օրենքի պահանջների խախտումով կատարված ամուսնության կնքմամբ, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինը.

դ) ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսինը:

Դատարանը կարող է ամուսնությունը վավերական ճանաչել, եթե ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին գործի քննության պահին վերացել են դրա կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները:

Կնոջ հղիության կամ երեխա ծնվելու դեպքում, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում դատարանը կարող է մերժել ամուսնացող անձի հետ կնքված ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցը:

Դատարանը չի կարող ամուսնությունը ճանաչել կեղծ, եթե նման ամուսնություն գրանցած անձինք մինչև դատարանի կողմից գործի քննությունը, փաստորեն, ընտանիք են կազմել:

Ամուսնության դադարումից հետո ամուսնությունը չի կարող անվավեր ճանաչվել, բացառությամբ ամուսինների միջև օրենքով արգելված ազգակցական կապի առկայության կամ ամուսնության պետական գրանցման պահին ամուսիններից մեկի կողմից այլ չլուծված ամուսնության մեջ գտնվելու դեպքերի:

Ամուսնությունն անվավեր ճանաչած անձանց կնքած ամուսնական պայմանագիրը, որպես կանոն, ճանաչվում է անվավեր:

Ամուսնությունն անվավեր ճանաչելը չի ազդում այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից հետո՝ երեք հարյուր օրվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա:

Բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահանջելու հատուցել իրեն պատճառված գույքային վնասը՝ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ամուսնությունն անվավեր ճանաչելու դեպքում բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահպանելու ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված ազգանունը:

Գլուխ 3

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները և կարգը

Որ մարմիններն են իրականացնում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները, ինչպես նաև դրանցում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելը, այդ գրանցումները չեղյալ հայտարարելը, կորած գրանցումները վերականգնելը, քաղաքացիական կացության ակտերի մատյանները վարելը կամ պահպանելը և վկայականների կրկնօրինակներ ու քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումը հաստատող այլ փաստաթղթեր տալն իրականացնում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինները (այսուհետ՝ ՔԿԱԳ մարմին):

Ամուսնության, ծննդի, ՔԿԱԳ մարմնի կողմից կատարված ամուսնության ամուսնալուծության պետական գրանցումը, ինչպես նաև նրա կողմից կատարված քաղաքացիական կացության ակտերի գրառման մեջ փոփոխությունը, լրացումը կամ ուղղումը կարող են կատարվել նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գտնվող՝ ամուսնության և ծննդի հանդիսավոր գրանցման պալատում, իսկ մահվան գրանցումը Երևան քաղաքում կատարվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գտնվող համապատասխան տարածքային մարմնում:

Օտարերկրյա պետություններում ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներն իրականացնում են այդ պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկները:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների հետ կապված գործունեությունը համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ կառավարության սահմանած կարգով:

Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկները սահմանված կարգով՝

ա) իրականացնում են ծննդի, ամուսնության, ամուսնալուծության, հայրության որոշման, անվան փոխման և մահվան պետական գրանցումը.

բ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց դիմումներով եզրակացություններ են կազմում Հայաստանի Հանրապետության տարածքում կազմված քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

գ) ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ են կատարում իրենց մոտ պահվող քաղաքացիական կացության ակտերի գրառումներում.

դ) իրենց կատարած քաղաքացիական կացության ակտերի գրառումների հիման վրա տալիս են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման վկայականներ, վկայականների կրկնօրինակներ և քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումը հաստատող այլ փաստաթղթեր.

ե) իրականացնում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման հետ կապված՝ օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

Ինչպես է իրականացվում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումը

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումն իրականացվում է՝ ելնելով ինչպես քաղաքացիների գույքային և անձնական՝ ոչ գույքային իրավունքների, պաշտպանության նպատակից, այնպես էլ պետության շահերից:

ՔԿԱԳ մարմինը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումն իրականացնում է քաղաքացիական կացության ակտում համապատասխան գրառում կատարելու և այդ գրառման հիման վրա քաղաքացուն պետական գրանցման վկայական տալու միջոցով:

ՔԿԱԳ մարմինը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումն իրականացնում է ՔԿԱԳ մարմին փաստաթղթերի ներկայացման օրը, եթե օրենքով այլ ժամկետներ նախատեսված չեն:

ՔԿԱԳ մարմին փաստաթղթերի ներկայացման օրը պետական գրանցման համար սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի փաստացի ստացման ժամանակն է, որը փաստաթղթերն ընդունած անձի ստորագրությամբ նշվում է ստացված դիմումի վրա և գրառվում է փաստաթղթերի ընդունման մատյանում:

ՔԿԱԳ մարմնի ղեկավարը կամ աշխատողը իրավունք չունի իրականացնելու իրեն, իր ամուսնուն, ամուսնու և իր ազգականներին (ծնող, երեխա, թոռ, պապ, տատ, հարազատ եղբայր և քույր) վերաբերող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում: Նման դեպքերում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումն իրականացնում է ՔԿԱԳ մարմնի այլ աշխատող կամ ՔԿԱԳ այլ մարմին:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և քաղաքացիական կացության ակտերի գրառումները կազմելու որակի համար պատասխանատու են ՔԿԱԳ մարմնի ղեկավարը և գրանցում կատարող աշխատողը:

ՔԿԱԳ մարմնի աշխատավայրից դուրս կարող են կատարվել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:

Քաղաքացիական կացության ակտի գրառում կատարելու համար պետք է ներկայացվեն այն փաստաթղթերը, որոնք հիմք են քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման համար, և դիմողի անձը հաստատող փաստաթուղթ:

Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթերը, որոնք տվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինները և ներկայացվել են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար, պետք է հյուպատոսական օրինականացման ենթարկվեն, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ, և թարգ-

մանվեն հայերեն: Թարգմանության իսկությունը վավերացվում է նոտարական կարգով:

ՔԿԱԳ մարմնում քաղաքացիական կացության ակտերի գրառումը և գործավարությունը կատարվում է հայերեն:

Քաղաքացիական կացության ակտի գրառումը կատարվում է երկու նույնական օրինակով:

Քաղաքացիական կացության ակտի յուրաքանչյուր գրառում ընթերցվում է դիմողի կողմից, ստորագրվում նրա և գրառումը կատարող ՔԿԱԳ մարմնի աշխատողի ու ՔԿԱԳ մարմնի ղեկավարի կողմից և հաստատվում է ՔԿԱԳ մարմնի կնիքով, իսկ հաշմանդամ քաղաքացիների դեպքում ընթերցվում և ստորագրվում է նաև նրանց ներկայացուցչի կողմից՝ ըստ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Քաղաքացիական կացության ակտերի գրառումների առաջին օրինակները (քաղաքացիական կացության ակտերի գրառումների յուրաքանչյուր տեսակն առանձին), որոնք կազմվել են մեկ տարվա ընթացքում, ժամանակագրական կարգով հավաքվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանում (ակտային գրքում): Նույն կարգով հավաքվում են նաև քաղաքացիական կացության ակտերի գրառումների երկրորդ օրինակները:

Քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի նմուշները, այդ ձևաթղթերի լրացման կարգը, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրառման դիմումի ձևաթղթերի նմուշները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ինչ է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականը

Քաղաքացիական կացության ակտի գրառման հիման վրա տրվում է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայական: Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականը ստորագրում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարը և հաստատվում է ՔԿԱԳ մարմնի կնիքով:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման վկայականները Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հայտով պատրաստվում են տպագրական եղանակով և համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր: Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման վկայականներից յուրաքանչյուրն ունի իր սերիան և համարը:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների վկայականների նմուշները, դրանց լրացման կարգը, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման փաստը հաստատող այլ փաստաթղթերի ձևաթղթերի նմուշները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման վկայականները ՔԿԱԳ տարածքային մարմիններին տրամադրում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ նախարարի սահմանած կարգով:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների վկայականները ոչնչացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում ստեղծվում է հանձնաժողով, որի լիազորությունները, ինչպես նաև վկայականների ոչնչացման կարգը և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

Երբ է քաղաքացուն տրամադրվում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ

Քաղաքացիական կացության ակտի գրառման հիման վրա, քաղաքացու դիմումի համաձայն, տրվում է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ:

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակը տրվում է՝

ա) այն անձին, որի վերաբերյալ կատարվել է տվյալ քաղաքացիական կացության ակտի գրառումը.

բ) մահացածի ազգականին կամ շահագրգիռ անձին՝ մահվան ակտի գրառման վերաբերյալ.

գ) ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչին, եթե անձը, որի

վերաբերյալ կատարվել է քաղաքացիական կացության ակտի գրառումը, վկայականի կրկնօրինակի տրման օրը անգործունակ է.

դ) այլ անձի, եթե նա քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ ստանալու իրավունք ունեցող անձի կողմից ներկայացնում է սահմանված կարգով տրված լիազորագիր:

Որ դեպքերում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ չի տրվում, եթե՝

ա) երեխայի ծննդյան վկայականի՝ այն ծնողներին, որոնք այդ երեխայի նկատմամբ զրկված են ծնողական իրավունքներից կամ սահմանափակված են նրանց ծնողական իրավունքները.

բ) ամուսնության վկայականի՝ այն անձանց, որոնց ամուսնությունը դադարել է կամ անվավեր է ճանաչվել:

Վերոհիշյալ անձանց դիմումով նրանց տրվում է երեխայի ծնունդը կամ ամուսնության պետական գրանցումը հաստատող փաստաթուղթ:

Վկայականների կրկնօրինակներ չեն տրամադրվում դադարած ամուսնության և մահացածի վերաբերյալ (բացի մահվան գրանցումից), ինչպես նաև անվավեր ճանաչված քաղաքացիական կացության ակտային գրանցումներից: Շահագրգիռ անձանց դիմումով ՔԿԱԳ մարմինը տրամադրում է փաստաթուղթ, որով հաստատվում են քաղաքացիական կացության ակտերի գրանցումները:

ՔԿԱԳ մարմինը քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ է տալիս դիմելուց հետո՝ մեկ օրվա ընթացքում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Որ դեպքերում է մերժվում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը մերժվում է, եթե՝

ա) այդ գրանցումը հակասում է օրենքի պահանջներին.

բ) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին.

գ) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Անձի կամ նրա ներկայացուցչի պահանջով, որին մերժվել է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը, ՔԿԱԳ մարմնի ղեկավարը պարտավոր է տվյալ անձին կամ նրա ներկայացուցչին գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին:

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման մերժումը կարող է բողոքարկվել դատարան:

ՔԿԱԳ մարմնի ղեկավարին և աշխատողին քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման կապակցությամբ անձի վերաբերյալ հայտնի դարձած տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

ՔԿԱԳ մարմնի ղեկավարը պարտավոր է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները տրամադրել Հայաստանի Հանրապետության բնակչության ռեգիստրի ձևավորման և վարման նպատակներով համապատասխան լիազոր մարմիններին, ինչպես նաև դատարանի (դատավորի), դատախազության, նախաքննության, հետաքննության մարմիններին՝ հարուցված քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ և օրենքով նախատեսված իրավասու այլ մարմինների պահանջով:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից, տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ քաղաքացիական կացության ակտի վավերացման նպատակով տրված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության տարածքում վավեր են ճանաչվում դրանց հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Որոնք են ծննդի պետական գրանցման հիմքերը

Ծննդի պետական գրանցման հիմքերն են՝

ա) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը.

բ) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որը ցուցաբերել է բժշկական օգնություն ծննդի ժամանակ.

գ) ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական գործունեությամբ զբաղվող անձի (այսուհետ՝ բժիշկ) կողմից՝ բժշկական կազմակերպությունից դուրս ծննդի դեպքում.

դ) ծննդյան մասին սահմանված ձևի գրավոր հայտարարությունը՝ տրված ծննդի ժամանակ ներկա գտնված անձի (անձանց) կողմից, և երեխայի առողջության մասին բժշկական կազմակերպության տված տեղեկանքը՝ բժշկական կազմակերպությունից դուրս և առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում:

Եթե տվյալ անձը հայտարարություն տալու համար անձամբ չի կարող ներկայանալ ՔԿԱԳ մարմին, ապա տվյալ հայտարարության տակ դրված նրա ստորագրությունը պետք է վավերացվի նոտարական կարգով:

Օրենքով նախատեսված ծննդի պետական գրանցման հիմքերի բացակայության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է երեխայի ծննդաբերության փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

Որտեղ է կատարվում ծննդի պետական գրանցումը

Ծննդի պետական գրանցումն իրականացնում է երեխայի ծննդի կամ ծնողների (ծնողներից մեկի) բնակության վայրի, գտնված (ընկեցիկ) երեխաներինը՝ գտնելու վայրի կամ երեխայի բնակության վայրի, իսկ կյանքի 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի ծնունդը՝ նաև մահվան վայրի ՔԿԱԳ մարմինը:

Ծննդի ակտի գրառման մեջ, որպես երեխայի ծննդյան վայր, նշվում է երեխայի փաստացի ծննդյան վայրը կամ այն վայրը, որտեղ գտնվել է երեխան (վարչատարածքային միավորի, քաղաքային կամ գյուղական համայնքի անվանումը):

Եթե երեխան ծնվել է տրանսպորտային միջոցում՝ ուղերթի ընթացքում, ապա ծննդի պետական գրանցումն իրականացնում է ծնողների (ծնողներից մեկի) բնակության վայրի կամ տրանսպորտային միջոցի ուղերթի տարածքում գտնվող ՔԿԱԳ որևէ մարմին: Այդ դեպքում, որպես երեխայի ծննդյան վայր, նշվում է երեխայի ծննդի պետական գրանցման վայրը:

Երեխայի ծննդյան մասին գրավոր հայտարարությունը ՔԿԱԳ մարմնին տրվում է ոչ ուշ, քան երեխայի ծննդի օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Երեխայի ծննդյան մասին հայտարարության հետ պետք է ներկայացվի երեխայի ծնունդը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև ծնողների (ծնողներից մեկի) կամ դիմողի անձը հաստատող, երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք համարվող փաստաթղթեր:

Ծննդյան դիմումը (հայտարարությունը) գրավոր ներկայացվում է ՔԿԱԳ մարմին, դիմումում պետք է նշել հետևյալ տեղեկությունները.

ա) երեխայի անունը, հայրանունը և ազգանունը.

բ) ծննդյան վայրը, ժամանակը և սեռը.

գ) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Եթե երեխան ծնվել է ոչ բժշկական կազմակերպությունում և ծննդաբերության ժամանակ առանց բժշկական օգնություն ցույց տալու, ծննդի ժամանակ ներկա գտնված անձի հայտարարությունը պետք է ներկայացվի օրենքով սահմանված կարգով:

Եթե երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է ամուսնության մեջ գտնվող անձանց, ամուսնության մեջ չգտնվող տղամարդու կամ կնոջ հայտարարությամբ, որոնք օգտվել են օրենքով նախատեսված վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից, ապա ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթղթի հետ ներկայացվում է նաև փոխնակ մոր հետ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի մեկ օրինակը:

Երեխայի ծննդյան մասին հայտարարություն տալու անհնարինության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարությունը տալիս է երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարը (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարը) կամ լիազորված անձը:

Երեխայի ծննդի ակտի գրառման մեջ ամուսնության մեջ գտնվող հայրը և մայրը գրառվում են որպես երեխայի ծնողներ՝ նրանցից որևէ մեկի դիմումի հիման վրա: Երեխայի մոր մասին տեղեկությունները երեխայի ծննդի ակտի գրառման մեջ լրացվում են համապատասխան փաստաթղթերի հիման վրա, իսկ հոր մասին տեղեկությունները՝ ծնողների ամուսնության վկայականի հիման վրա:

Եթե երեխայի ծնողներն ամուսնալուծված են, ամուսնությունը դատական կարգով ճանաչվել է անվավեր, կամ եթե ամուսինը մահացել է, բայց ամուսնալուծության, ամուսնության անվավեր ճանաչման կամ ամուսնու մահվան օրվանից մինչև երեխայի ծննդի օրը անցել է ոչ ավելի, քան երեք հարյուր օր, ապա ծննդի ակտի գրառման մեջ երեխայի մոր մասին տեղեկությունները լրացվում են օրենքով սահմանված կարգով, հոր մասին տեղեկությունները՝ ծնողների ամուսնության վկայականի կամ ամուսնության պետական գրանցումը հաստատող այլ փաստաթղթի, ինչպես նաև ամուսնությունը դադարելու ժամանակը հաստատող փաստաթղթի հիման վրա:

Եթե երեխայի ծնողներն ամուսնության մեջ չեն գտնվում, ապա երեխայի ծննդի ակտի գրառման մեջ մոր մասին տեղեկությունները լրացվում են սահմանված կարգով: Այդ դեպքերում երեխայի հոր մասին տեղեկությունները լրացվում են՝

ա) հայրության որոշման ակտի գրառման հիման վրա, եթե հայրությունը ճանաչվում և գրանցվում է երեխայի ծննդի պետական գրանցման հետ միաժամանակ.

բ) երեխայի մոր գրավոր հայտարարության հիման վրա, եթե հայրությունը որոշված չէ: Երեխայի հոր ազգանունը գրառվում է մոր ազգանվամբ, հոր անունը և նրա հայրանունը՝ մոր ցուցումով: Երեխայի հոր մասին լրացված լուծման համար: Մոր ցանկությամբ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ կարող են չլրացվել երեխայի հոր մասին տեղեկությունները:

Ամուսնության մեջ գտնվող անձինք, ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ կինը, որոնք օգտվել են օրենքով նախատեսված վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից, ծննդի պետական գրանցման գրքում գրանցվում են որպես ծնողներ (ծնող)՝ փոխնակ մոր հետ կնքած պայմանագրի հիման վրա:

Ինչպես է կատարվում ծննդի պետական գրանցման ժամանակ երեխայի ծննդի անվան, հայրանվան և ազգանվան գրառումը

Ծննդի ակտի գրառման մեջ երեխայի անունը գրառվում է ծնողների համաձայնությամբ:

Ծննդի ակտի գրառման մեջ երեխայի հայրանունը գրառվում է հոր անվամբ:

Ծննդի ակտի գրառման մեջ երեխայի ազգանունը գրառվում է նրա ծնողների ազգանվամբ: Ծնողների տարբեր ազգանունների առկայության դեպքում երեխայի ազգանունը գրառվում է հոր կամ մոր ազգանվամբ՝ ծնողների համաձայնությամբ:

Երեխայի հոր հետ ամուսնության մեջ չգտնվող մոր ցանկությամբ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկությունները լրացվում են մոր ցուցումով:

Ինչպես է կատարվում գտնված (ընկեցիկ) երեխայի և մահացած ծնված կամ կյանքի չորս շաբաթվա ընթացքում մահացած ծննդի պետական գրանցումը

Երեխային գտած անձն այդ մասին 48 ժամվա ընթացքում պարտավոր է հայտարարություն տալ երեխայի գտնվելու վայրի ոստիկանության կամ խնամակալության և հոգաբարձության մարմին:

Ոստիկանության, խնամակալության և հոգաբարձության մարմինները, դաստիարակչական ու բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններ պարտավոր են երեխայի գտնվելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, հայտարարել գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի պետական գրանցման մասին:

Գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի պետական գրանցման հայտարարության հետ պետք է ներկայացվեն՝

ա) երեխային հայտնաբերելու մասին փաստաթուղթ՝ տրված ոստիկանության կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից՝ նշելով երեխային հայտնաբերելու ժամանակը, տեղը և հանգամանքները.

բ) երեխայի տարիքն ու սեռը հաստատող փաստաթուղթ՝ տրված բժշկական կազմակերպության կողմից:

Գտնված (ընկեցիկ) երեխայի անվան, հայրանվան և ազգանվան մասին տեղեկությունները նրա ծննդի ակտի գրառման մեջ լրացվում են վերոնշյալ մարմնի կամ կազմակերպության ցուցումով: Գտնված (ըն-

կեցիկ) երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա ծնողների մասին տեղեկություններ չեն լրացվում:

Մահացած ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացվում է բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից տրված՝ պերինատալ մահվան մասին սահմանված ձևի փաստաթղթի հիման վրա:

Մահացած ծնված երեխայի համար ծննդյան վկայական չի տրվում: Ծնողների (ծնողներից մեկի) պահանջով տրվում է փաստաթուղթ, որով հաստատվում է մահացած ծնված երեխայի ծննդի պետական գրանցման փաստը:

Մահացած ծնված երեխայի մահվան պետական գրանցում չի կատարվում:

Եթե երեխան մահացել է կյանքի չորս շաբաթվա ընթացքում, ապա կատարվում է նրա ծննդի և մահվան պետական գրանցում:

Կյանքի չորս շաբաթվա ընթացքում մահացած երեխայի ծննդի և մահվան պետական գրանցումը կատարվում է ծննդի, պերինատալ մահվան և մահվան մասին բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից տրված սահմանված ձևի փաստաթղթերի հիման վրա:

Ծննդի և մահվան ակտերի գրառումների հիման վրա տրվում է միայն երեխայի մահվան վկայական: Ծնողների (ծնողներից մեկի) պահանջով տրվում է փաստաթուղթ, որով հաստատվում է կյանքի չորս շաբաթվա ընթացքում մահացած երեխայի ծննդի պետական գրանցման փաստը:

Մահացած ծնված երեխայի ծննդի կամ կյանքի չորս շաբաթվա ընթացքում երեխայի մահվան մասին ՔԿԱԳ մարմնին տեղյակ պահելու պարտականությունը դրվում է՝

ա) այն բժշկական կազմակերպության ղեկավարի վրա, որտեղ ընդունվել է ծնունդը, կամ որտեղ երեխան մահացել է.

բ) բժշկական կազմակերպությունից դուրս ծննդի դեպքում՝ այն բժշկական կազմակերպության ղեկավարի կամ բժշկի վրա, որը հաստատել է մահացած ծնված երեխայի ծննդի կամ կյանքի չորս շաբաթվա ընթացքում երեխայի մահվան փաստը:

Մահացած ծնված երեխայի ծննդի կամ կյանքի չորս շաբաթվա ընթացքում երեխայի մահվան մասին հայտարարությունը պետք է

տրվի ոչ ուշ, քան մահացած ծնված երեխայի ծննդից կամ երեխայի մահվան օրվանից հետո՝ յոթ օրվա ընթացքում:

Մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից ծննդյան մասին տրված սահմանված ձևի փաստաթղթի առկայության դեպքում իրականացվում է ծնողների (ծնողներից մեկի) կամ երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) կամ լիազորված անձի կամ շահագրգիռ այլ անձանց գրավոր դիմումի հիման վրա: Երեխայի չափահաս դառնալուց հետո նրա ծննդի պետական գրանցումն իրականացվում է իր դիմումի հիման վրա:

Ծննդի ակտի գրառման մեջ ինչ տեղեկություններ են լրացվում

Ծննդի ակտի գրառման մեջ լրացվում են հետևյալ տեղեկությունները.

ա) երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, ծնողների փոխադարձ համաձայնությամբ և ցանկությամբ՝ նաև ազգությունը, սեռը, ծննդյան վայրը և ժամանակը.

բ) ծնված երեխաների քանակը (մեկ, երկու կամ ավելի կենդանածին կամ մեռելածին).

գ) նորածնի մոր որերորդ երեխան է.

դ) երեխայի ծննդի փաստը հաստատող փաստաթղթի տվյալները.

ե) ծնողների անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, աշխատանքի վայրը, զբաղմունքը և կրթությունը.

զ) հոր մասին տեղեկություններ լրացնելու համար հիմք համարվող փաստաթղթի տվյալները.

է) դիմող անձի անունը, հայրանունը, ազգանունը և բնակության վայրը կամ երեխայի ծննդի մասին հայտարարող մարմնի կամ կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը.

ը) դիմողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

թ) ծննդի ակտի գրառման ժամանակը, համարը և ծննդի պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը).

ժ) տրված ծննդյան վկայականի սերիան և համարը.

ժա) երեխայի բնակության վայրը.

ժ) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Միաժամանակ երկու կամ ավելի երեխաների ծննդյան դեպքում երեխայի ծննդի պետական գրանցում կատարվում է յուրաքանչյուր երեխայի համար առանձին՝ նշելով նրանց ծննդյան հաջորդականությունը:

Մահացած ծնված երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա անվան մասին տեղեկություններ չեն լրացվում:

Ծննդյան վկայականը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

ա) երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, ծնողների փոխադարձ համաձայնությամբ՝ նաև ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը.

բ) ծնողների անունը, հայրանունը, ազգանունը և ազգությունը.

գ) ծննդի ակտի գրառման ժամանակը և համարը.

դ) ծննդի պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը).

ե) ծննդյան վկայական տալու ժամանակը:

Ինչպես է գրանցվում ամուսնությունը

Նախ նշենք, որ ամուսնության պետական գրանցման համար հիմք է համարվում ամուսնացող անձանց համատեղ դիմումը, իսկ ամուսնության պետական գրանցումը կատարում է ամուսնացողներից մեկի բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը:

Ամուսնացող անձինք ՔԿԱԳ մարմին են ներկայացնում ամուսնության համատեղ գրավոր դիմում:

Համատեղ դիմումի մեջ պետք է հաստատվի ամուսնության փոխադարձ կամավոր համաձայնությունը և ամուսնական տարիքի հասնելը, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով սահմանված՝ ամուսնությանն արգելք հանդիսացող հանգամանքների բացակայության փաստը:

Ամուսնության մասին համատեղ դիմումի մեջ պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

ա) ամուսնացող անձանցից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը և զբաղմունքը.

բ) ամուսնացող անձանց կողմից ընտրվող ազգանունը՝ ամուսնության պետական գրանցումից հետո.

գ) ընտանեկան դրությունը.

դ) ամուսնացողների անձը հաստատող փաստաթղթերի տվյալները.

ե) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Ամուսնացող անձինք ստորագրում են ամուսնության մասին համատեղ դիմումը և նշում այն ներկայացնելու ժամանակը:

Ամուսնության մասին համատեղ դիմում տալու հետ միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել՝

ա) ամուսնացողների անձը հաստատող փաստաթղթերը.

բ) եթե անձը նախկինում գտնվել է ամուսնության մեջ, նաև նախորդ ամուսնության դադարման մասին փաստաթուղթը:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսնությունը միմյանց և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության գրանցման վերաբերյալ դիմումները ներկայացնում և ամուսնության գրանցման մասին թույլտվություն են ստանում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից:

Եթե ամուսնացող անձանցից մեկը չի կարող ներկայանալ ՔԿԱԳ մարմին՝ նախատեսված համատեղ դիմում տալու համար, ապա ամուսնացող անձանց կամքի արտահայտությունը կարող է ձևակերպվել առանձին հայտարարություններով: Նման հայտարարություն տվող անձանց ստորագրությունները պետք է վավերացվեն օրենքով սահմանված կարգով:

Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է ՔԿԱԳ մարմին ամուսնացող անձանց ներկայացրած համատեղ դիմումում նշված օրը, սակայն ոչ շուտ, քան դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը և երեք ամիսից ոչ ուշ: Ամուսնացող անձանց համատեղ դիմումի հիման վրա ամուսնության պետական գրանցման 10-օրյա ժամկետը կարող է կրճատվել հարգելի պատճառների առկայության դեպքում: Ամուսնության գրանցման ժամկետը կրճատելու համար հիմք համարվող հարգելի պատճառներ են՝

1) ամուսնացող անձանց համատեղ երեխա (ներ) ունենալը.

2) ամուսնացող կնոջ հղիությունը (առնվազն 12 շաբաթական).
3) ամուսնացող անձի զորակոչվելը ժամկետային զինվորական ծառայության.
4) ամուսնացող անձի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության կամ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելը.
5) Հայաստանի Հանրապետությունում ամուսնացող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ միմյանց կամ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության դեպքում ամուսնացողների կամ նրանցից մեկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երկարատև ժամանակով մեկնելու (բացակայելու) դեպքում.
6) ամուսնացող անձի ծանր հիվանդությունը:

Վերը նշված հարգելի պատճառները պետք է հաստատված լինեն համապատասխան փաստաթղթերով (կնոջ հղիության վերաբերյալ բժշկական տեղեկանք, երեխայի ծննդյան և հայրության ճանաչման վկայական, զինվորական ծառայության վայրից տեղեկանք, Հայաստանի Հանրապետության տարածքից մեկնելու փաստը հաստատող փաստաթուղթ):

Ամուսնության պետական գրանցման ժամկետը, ելնելով կոնկրետ հանգամանքներից, կարող է կրճատվել նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի թույլտվությամբ:

Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ: Ամուսնացող անձանց ցանկությամբ ամուսնության պետական գրանցումը կարող է կատարվել հանդիսավոր պայմաններում:

Եթե ամուսնացող անձինք (ամուսնացողներից մեկը) չեն կարող ներկայանալ ՔԿԱԳ մարմին ծանր հիվանդության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարգելի այլ պատճառներով, ապա ամուսնության պետական գրանցումն ամուսնա-

ցող անձանց ներկայությամբ կարող է կատարվել տանը, բժշկական կամ այլ հաստատությունում:

Կալանավորված կամ ազատազրկման վայրերում պատիժ կրող անձանց հետ ամուսնության պետական գրանցումն իրականացնում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարը՝ քրեակատարողական համապատասխան հաստատության ղեկավարի համաձայնությամբ ընտրված վայրում:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով նախատեսված ամուսնությանն արգելք հանդիսացող հանգամանքների առկայությունը հաստատող ապացույցների դեպքում ՔԿԱԳ մարմնի ղեկավարը պարտավոր է մերժել ամուսնության պետական գրանցումը:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ամուսնություն գրանցելու համար անձը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից տրված տեղեկանք՝ ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ: Ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանքի տրման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ամուսնության պետական գրանցման ժամանակ ամուսնության ակտի գրառման մեջ ամուսինների ազգանունը լրացվում է նրանց ցանկությամբ (ընդհանուր ազգանուն կամ մինչամուսնական ազգանվան պահպանում):

Եթե ամուսիններն ընտրել են ընդհանուր ազգանուն, ապա այն կարող է լրացվել ամուսիններից մեկի ազգանունով կամ այնպիսի ազգանունով, որը պարունակում է կնոջ և ամուսնու ազգանունը միաժամանակ: Ընդհանուր ազգանունը չի կարող պարունակել երկու ազգանունից ավելի և գրառվում է գծիկով:

Ամուսնության ակտի գրառման մեջ լրացվում են հետևյալ տեղեկությունները.

ա) ամուսնացողներից յուրաքանչյուրի ազգանունը (մինչև ամուսնությունը և ամուսնությունից հետո), անունը, հայրանունը, ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը և զբաղմունքը, ընտանեկան դրությունը (այրի է, ամուսնալուծված է, ամուսնացած չէ).

բ) ամուսնացողների անձը հաստատող փաստաթղթերի տվյալները և ստորագրությունները.

գ) ամուսնության ակտի գրառման ժամանակը, համարը և ամուսնության պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը).

դ) ամուսնությունը վկայող անձանց անունները, ազգանունները և նրանց ստորագրությունները.

ե) տրված ամուսնության վկայականի սերիան և համարը.

զ) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Ամուսնության վկայականը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

ա) ամուսնացողներից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը (մինչև ամուսնությունը և ամուսնությունից հետո), ազգությունը՝ ամուսնության ակտի գրառմանը համապատասխան, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը.

բ) ամուսնության ակտի գրառման ժամանակը և համարը.

գ) ամուսնության պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը).

դ) ամուսնության վկայական տալու ժամանակը:

Գլուխ 4

Ամուսնալուծության պետական գրանցումը

Որոնք են ամուսնալուծության պետական գրանցման հիմքերը

Ամուսնալուծության պետական գրանցման հիմքերն են՝

ա) ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմիններում ամուսինների միջև փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար.

բ) ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով.

գ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքերում, երբ բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը, երբ ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը ՔԿԱԳ մարմիններում կատարելուց, կամ երբ ամուսինները ցանկանում են ամուսնությունը լուծել դատական կարգով՝ փոխադարձ համաձայնությամբ:

Ամուսնալուծության պետական գրանցումը կատարում է ամուսինների (ամուսիններից մեկի) բնակության վայրի կամ ամուսնության պետական գրանցման վայրի ՔԿԱԳ մարմինը:

Ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության դեպքում ինչ կարգով է գրանցվում այն

Ամուսինների փոխադարձ համաձայնության դեպքում նրանք պետք է ներկայացնեն համատեղ դիմում:

Ամուսնալուծության մասին համատեղ դիմումում պետք է հաստատվի ամուսնալուծության մասին ամուսինների փոխադարձ համաձայնությունը, և պետք է նշվեն նաև հետևյալ տեղեկությունները.

ա) ամուսիններից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը (ամուսիններից յուրաքանչյուրի ցանկությամբ), ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը և զբաղմունքը.

բ) ամուսնության ակտի գրառման տվյալները.
գ) այն ազգանունները, որոնք ընտրվում են ամուսիններից յուրաքանչյուրի կողմից ամուսնալուծությունից հետո.
դ) ամուսինների անձը հաստատող փաստաթղթերի տվյալները.
ե) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Ամուսնալուծվել ցանկացող ամուսինները ստորագրում են ամուսնալուծության մասին դիմումը և նշում այն ներկայացնելու ժամանակը:

Եթե ամուսիններից մեկը հնարավորություն չունի անձամբ ներկայանալու ՔԿԱԳ մարմին՝ ամուսնալուծության մասին համատեղ դիմում տալու համար, ապա ամուսինների կամքի արտահայտությունը կարող է ձևակերպվել ամուսնալուծության մասին առանձին հայտարարություններով: Նման հայտարարություն տվող ամուսնու ստորագրությունը պետք է վավերացված լինի օրենքով սահմանված կարգով:

Ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, բայց երեք ամսից ոչ ուշ, երկու ամուսինների ներկայությամբ կամ ամուսիններից մեկի պարտադիր ներկայությամբ և մյուսի՝ սահմանված կարգով վավերացված համաձայնությամբ:

Ամուսինների կողմից ամուսնալուծության վերաբերյալ դիմումներն առանձին հայտարարություններով ձևակերպելու դեպքում մեկամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է ՔԿԱԳ մարմին ամուսնալուծության մասին երկրորդ հայտարարությունը տալու օրվանից:

Ամուսիններից մեկի դիմումի հիման վրա ինչ կարգով է գրանցվում ամուսնալուծությունը

Ամուսիններից մեկի կամ նրա կողմից լիազորված անձի դիմումի հիման վրա ամուսնալուծության պետական գրանցման ժամանակ դիմումում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները.

ա) ամուսնալուծվել ցանկացող ամուսնու անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը (նրա ցանկությամբ), ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, կրթությունը, աշխատանքի վայրը և զբաղմունքը.
բ) ամուսնության ակտի գրառման տվյալները.
գ) այն ազգանունը, որը ամուսնալուծությունից հետո ընտրում է ամուսնալուծվել ցանկացող ամուսինը.

դ) ամուսնալուծվել ցանկացող ամուսնու անձը հաստատող փաստաթղթի տվյալները.
ե) ամուսնալուծության հիմքերը.
զ) ամուսիններից մյուսի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վերջին հայտնի վայրը.
է) անհայտ բացակայող կամ անգործունակ ճանաչված ամուսնու գույքի հավատարմագրային կառավարչի բնակության վայրը կամ այն քրեակատարողական հաստատության գտնվելու վայրը, որտեղ դատապարտված ամուսինը կրում է պատիժը.
ը) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Ամուսնալուծության մասին դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացվեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը (քաղվածքը)՝ ամուսիններից մեկին անհայտ բացակայող կամ անգործունակ ճանաչելու մասին կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի պատճենը (քաղվածքը)՝ ամուսիններից մյուսին երեք տարուց ոչ պակաս ժամկետով ազատազրկման դատապարտելու մասին:

Ամուսնալուծվել ցանկացող ամուսինը ստորագրում է ամուսնալուծության մասին դիմումը և նշում այն ներկայացնելու ժամանակը:

Ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է ամուսնալուծվել ցանկացող ամուսիններից մեկի կամ նրա կողմից լիազորված անձի ներկայությամբ:

ՔԿԱԳ այն մարմինը, որն ընդունում է ամուսնալուծության մասին դիմումը, եռօրյա ժամկետում պատիժը կրող ամուսնուն, անհայտ բացակայող կամ անգործունակ ճանաչված ամուսնու գույքի հավատարմագրային կառավարչին կամ խնամակալին, իսկ նրանց բացակայության դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմնին տեղյակ է պահում ամուսնալուծության մասին ստացված դիմումի, ամուսնալուծության պետական գրանցման ժամանակի և ամուսնալուծությունից հետո ընտրված ազգանվան մասին:

Ինչ կարգով է գրանցվում ամուսնալուծությունը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ամուսնալուծության պետական գրանցման համար ամուսինների դիմումի

կամ անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացվեն ամուսնալուծության մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը (քաղվածքը) և ամուսինների (ամուսիններից մեկի) կամ անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալի անձը հաստատող փաստաթղթերը:

Ամուսինները (ամուսիններից մեկը) կամ անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալը կարող են այլ անձանց գրավոր լիազորել՝ դիմում տալու ամուսնալուծության պետական գրանցման համար:

Ամուսնության պետական գրանցման ժամանակ իր ազգանունը փոխած ամուսինն իրավասու է ամուսնալուծությունից հետո պահպանել այդ ազգանունը կամ իր ցանկությամբ ամուսնալուծության պետական գրանցումից հետո ստանալ իր մինչամուսնական ազգանունը:

Ինչ տեղեկություններ է պարունակում ամուսնալուծության վկայականը

Ամուսնալուծության վկայականը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

ա) ամուսնալուծվող անձանցից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը (ամուսնալուծությունից առաջ և հետո), ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, ազգությունը՝ ամուսնալուծության ակտի գրառմանը համապատասխան.

բ) ամուսնության դադարման ժամանակը.

գ) ամուսնալուծության ակտի գրառման ժամանակը և համարը.

դ) ամուսնալուծության պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը).

ե) այն անձի անունը, հայրանունը և ազգանունը, որին տրվում է ամուսնալուծության վկայականը.

զ) ամուսնալուծության վկայական տալու ժամանակը:

ՔԿԱԳ մարմինը ամուսնալուծության վկայականը տալիս է ամուսնալուծվող անձանցից յուրաքանչյուրին:

Գլուխ 5
Հայրության որոշման պետական գրանցումը

Որոնք են հայրության որոշման պետական գրանցման հիմքերը

Հայրության որոշման պետական գրանցման հիմքերն են՝

ա) երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ դիմումը.

բ) երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող երեխայի հոր դիմումը.

գ) հայրության կամ հայրության ճանաչման փաստի որոշման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Հայրության որոշման պետական գրանցումն իրականացնում է երեխայի՝ ամուսնության մեջ չգտնվող հոր կամ մոր բնակության վայրի կամ երեխայի ծնողի պետական գրանցման վայրի, կամ հայրության կամ հայրության ճանաչման փաստի որոշման մասին վճիռ կայացրած դատարանի գտնվելու վայրի ՔԿԱԳ մարմինը:

Ինչպես է կատարվում հայրության որոշման պետական գրանցումը երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա

Հայրության որոշման մասին երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ գրավոր դիմումը ներկայացվում է ՔԿԱԳ մարմին:

Հայրության որոշման համատեղ դիմումը կարող է տրվել երեխայի ծնողի պետական գրանցման ժամանակ կամ դրանից հետո:

Եթե հիմքեր կան ենթադրելու, որ երեխայի ծնողի պետական գրանցումից հետո հայրության որոշման համատեղ դիմում տալը կարող է անհնարին կամ դժվար լինել, երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող՝ երեխայի ապագա հայրն ու մայրը կարող են նման դիմում տալ մոր հղիության ընթացքում: Նման դիմումի առկայության դեպքում հայրության որոշման պետական գրանցումն իրականացվում է երեխայի ծնողի պետական գրանցման հետ միաժամանակ, եթե մինչև երեխայի ծնողի պետական գրանցումը հոր կամ մոր կողմից հետ չի վերցվել նախկինում տրված դիմումը, և նոր դիմում տալու անհրաժեշտություն չկա:

Հայրության որոշման պետական գրանցման համատեղ դիմումում պետք է հաստատվի երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի կողմից հայրության ճանաչման փաստը և հայրության որոշման

մասին մոր համաձայնությունը: Այդ դիմումում պետք է նաև նշված լինեն հետևյալ տեղեկությունները.

ա) իրեն երեխայի հայր ճանաչող անձի անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը (դիմողի ցանկությամբ), ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը.

բ) երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, սեռը, ծննդյան վայրը և ժամանակը, ինչպես նաև նրա ծննդի ակտի գրառման տվյալները.

գ) երեխայի մոր անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը (դիմողի ցանկությամբ), ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը.

դ) ամուսնության ակտի գրառման տվյալները (երեխայի ծնվելուց հետո նրա մոր և հոր ամուսնության դեպքում).

ե) հայրության որոշումից հետո երեխայի անունը, հայրանունը, ազգանունը.

զ) երեխայի հոր և մոր անձը հաստատող փաստաթղթերի տվյալները:

Դիմողները ստորագրում են հայրության որոշման համատեղ դիմումը և նշում այն ներկայացնելու ժամանակը:

Մինչև երեխայի ծնունդը տրված նման դիմումում հաստատվում է ապագա երեխայի ծնողների համաձայնությունը նրան անուն (կախված ծնված երեխայի սեռից) և հոր կամ մոր ազգանունը տալու վերաբերյալ:

Երեխայի ծննդից հետո հայրության ճանաչման դեպքում հայրության որոշման համատեղ դիմումի հետ ներկայացվում է երեխայի ծննդյան վկայականը, իսկ մինչև երեխայի ծնունդը տրված նման դիմումի հետ՝ բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից տրված՝ մոր հղիությունը հաստատող փաստաթուղթը:

Եթե երեխայի հայրը կամ մայրը հնարավորություն չունեն անձամբ տալու վերոնշյալ դիմումը, ապա նրանց կամքի արտահայտությունը կարող է ձևակերպվել հայրության որոշման առանձին հայտարարություններով: Նման հայտարարության ստորագրությունը պետք է վավերացված լինի օրենքով սահմանված կարգով:

Ինչպես է կատարվում երեխայի ծննդյան պահին երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող հոր դիմումի համաձայն՝ հայրության որոշման պետական գրանցումը

Երեխայի ծննդյան պետական գրանցման պահին երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող հոր դիմումի համաձայն՝ հայրության որոշման պետական գրանցումն իրականացվում է մոր մահվան, նրան անգործունակ ճանաչելու, մոր գտնվելու վայրը պարզելու անհնարինության, մորն անհայտ բացակայող ճանաչելու կամ նրան ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի, ինչպես նաև հայրության որոշման մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնության առկայության դեպքում:

Հայրության որոշման մասին հոր գրավոր դիմումը ներկայացվում է ՔԿԱԳ մարմին: Նման դիմումի մեջ պետք է հաստատվի երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի կողմից հայրության ճանաչումը և վերը նշված հանգամանքների առկայության փաստը: Հայրության որոշման մասին դիմումի մեջ պետք է նշված լինեն նաև հետևյալ տեղեկությունները.

ա) իրեն երեխայի հայր ճանաչող անձի անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը (դիմողի ցանկությամբ), ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը.

բ) երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, սեռը, ծննդյան վայրը և ժամանակը, ինչպես նաև նրա ծննդի ակտի գրառման տվյալները.

գ) երեխայի մոր մահվան, նրան անգործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու կամ ծնողական իրավունքներից զրկելու փաստաթղթի տվյալները.

դ) հայրության որոշումից հետո երեխայի անունը, հայրանունը, ազգանունը.

ե) հոր անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

զ) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Դիմողը ստորագրում է հայրության որոշման դիմումը և նշում այն ներկայացնելու ժամանակը:

Նման դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացվեն մոր մահվան վկայականը, մորը անգործունակ ճանաչելու, ծնողական իրա-

վունքներից զրկելու կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը կամ համապատասխան մարմնից մոր վերջին հայտնի բնակության վայրի մասին փաստաթուղթը, որը հաստատում է մոր գտնվելու վայրը պարզելու անհնարինությունը:

Ինչպես է կատարվում չափահաս անձի նկատմամբ հայրության որոշման պետական գրանցումը

Եթե հայրության որոշման պետական գրանցումը կատարվում է հայրության որոշման մասին դիմումի ներկայացման օրվա դրությամբ չափահաս անձի նկատմամբ, ապա այդ դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացվի չափահաս անձի՝ հայրության որոշման մասին գրավոր համաձայնությունը: Չափահաս անձի համաձայնությունը կարող է արտահայտված լինել առանձին դիմումով կամ հոր և մոր համատեղ դիմումում ստորագրելով: Նշված համաձայնության բացակայության դեպքում հայրությունը որոշվում է դատական կարգով:

Ինչպես է կատարվում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա հայրության որոշման պետական գրանցումը

Հայրության որոշման մասին կամ հայրության ճանաչման փաստի որոշման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա հայրության որոշման պետական գրանցումն իրականացվում է երեխայի հոր, մոր կամ այն խնամակալի (հոգաբարձուի), որի խնամակալության կամ հոգաբարձության ներքո է գտնվում երեխան, ինչպես նաև չափահաս երեխայի գրավոր դիմումների հիման վրա:

Հայրության որոշման պետական գրանցման մասին դիմումի հետ միաժամանակ ներկայացվում է հայրության որոշման կամ հայրության ճանաչման փաստի հաստատման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը (քաղվածքը):

Վերը նշված անձինք կարող են սահմանված կարգով լիազորել այլ անձանց՝ դիմելու հայրության որոշման պետական գրանցման համար: Երեխայի հոր մասին տվյալները հայրության որոշման ակտի գրառման մեջ լրացվում են հայրության որոշման կամ հայրության ճա-

նաչման փաստի հաստատման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

Հայրության որոշման ակտի գրառման մեջ լրացվում են հետևյալ տեղեկությունները.

ա) երեխայի հայր ճանաչված անձի անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը.

բ) երեխայի ազգանունը, անունը, հայրանունը (մինչև հայրության որոշումը), սեռը, ծննդյան վայրը և ժամանակը.

գ) երեխայի ծննդի ակտի գրառման ժամանակը, համարը և ծննդի պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը).

դ) հայրության որոշումից հետո երեխայի անունը, հայրանունը, ազգանունը.

ե) երեխայի մոր անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը (դիմողի ցանկությամբ), ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը.

զ) ծնողների անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

է) հայրության որոշման համար հիմք համարվող փաստաթղթի տվյալները.

ը) դիմողի (դիմողների) անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը.

թ) դիմողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները և ստորագրությունը.

ժ) հայրության որոշման ակտի գրառման ժամանակը, համարը և հայրության որոշման պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը).

ժա) տրված հայրության որոշման վկայականի սերիան և համարը.

ժբ) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Ինչ տեղեկություններ է պարունակում հայրության որոշման վկայականը

Հայրության որոշման վկայականը ՔԿԱԳ մարմնի կողմից կազմվում և տրվում է ծնողներին (ծնողներից մեկին) վերջիններիս դիմումի հիման վրա:

Հայրության որոշման վկայականը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

ա) երեխայի հայր ճանաչված անձի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը, ազգությունը՝ հայրության որոշման ակտի գրառմանը համապատասխան.
բ) երեխայի անունը, հայրանունը, ազգանունը հայրության որոշումից առաջ և հետո, ծննդյան վայրը և ժամանակը.
գ) երեխայի մոր անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը, ազգությունը՝ հայրության որոշման ակտի գրառմանը համապատասխան.
դ) հայրության որոշման ակտի գրառման ժամանակը և համարը.
ե) հայրության որոշման պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը).
զ) հայրության որոշման վկայական տալու ժամանակը:

Ինչպես են կատարվում հայրության որոշման կապակցությամբ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ փոփոխությունները

Հայրության որոշման ակտի գրառման հիման վրա ՔԿԱԳ մարմինը հոր վերաբերյալ տեղեկությունները լրացնում է երեխայի ծննդի ակտի գրառման մեջ: Հոր մասին տեղեկություններ լրացնելը, ինչպես նաև երեխայի անվան, հայրանվան և ազգանվան փոփոխումը կատարվում է օրենքով քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու համար սահմանված կարգով:

ՔԿԱԳ մարմինը պարտավոր է հայրության որոշման կապակցությամբ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ փոփոխություններ կատարելու մասին հայրության որոշման պետական գրանցումից հետո՝ եռօրյա ժամկետում, տեղյակ պահել երեխայի մոր բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնին:

Բաժին II. Ընտանիք

Գլուխ 1

Ընտանեկան հարաբերություններ

Ինչ է ընտանիքը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն՝ «Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է»:

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես ամուսնական, ազգակցական կամ այլ անձնական կապերով միավորված և համատեղ ապրող անձանց միություն, մարդկանց փոքր խումբ, որի անդամներն իրար հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և մեկը մյուսի նկատմամբ բարոյական պատասխանատվությամբ:

Ամուսնության մեջ գտնվող տղամարդու և կնոջ, ինչպես նաև ծնողների ու զավակների հարաբերությունները, նրանց միջև առաջացած սոցիալական կապերի ամբողջությունը սովորաբար անվանվում է ընտանիք: Հետևաբար, ընտանիք ասելով, նախնառաջ, պետք է հասկանալ այնպիսի անձանց միավորում, ովքեր իրար հետ կապված են ամուսնական կամ ազգակցական կապերով, սովորաբար ապրում են համատեղ և վարում են ընդհանուր տնտեսություն:

Սակայն ընտանիքը միայն ամուսնական, ազգակցական կապերով, ընդհանուր հոգևոր ու նյութական շահերով կապված անձանց միություն չէ: Ընտանիքը հասարակության մի մասնիկն է, այն սկզբնական կոլեկտիվը, որտեղ ձևավորվում է քաղաքացի անհատի ինքնությունը: ՀՀ ընտանեկան օրենսգիրքը չի տալիս «ընտանիք» հասկացության բնորոշումը: Դրանում խոսվում է միայն ընտանիքի անդամների ունեցած այս կամ այն իրավունքների ու պարտականությունների մասին, անգամ չնշելով, թե ովքեր են պատկանում ընտանիքի անդամների թվին: Ընտանիքի անդամների փոխհարաբերությունների համար հատկանշականն այն է, որ դրանք առաջանում են անկախ մասնակիցների կամքից, օրենքի կատեգորիկ նորմերի ուժով, բացառությամբ ամուսնական հարաբերության և տասը տարեկանից բարձր տարիքի երեխա-

յի որդեգրման հետևանքով ծագած հարաբերություններից, որոնք առաջանում են ամուսինների և որդեգրվող երեխաների կամքով:

Ընտանիքն առաջանում է որոշակի իրավաբանական փաստերի հիման վրա: Իսկ դրանք այն իրավաբանական փաստերն են, որոնց հետ է օրենսդրությունը կապում ընտանեկան հարաբերությունների առաջացումy: Ընտանեկան իրավահարաբերությունների հիմքն են կազմում հատուկ իրավաբանական փաստերy՝ ամուսնությունը, ազգակցությունը, մայրությունը, հայրությունը, որդեգրումը և այլն: Ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների իրականացումը և իրենց պարտականությունների կատարումը չպետք է խախտեն ընտանիքի այլ անդամների և այլոց իրավունքները, ազատությունները և օրինական շահերը:

Ընտանիք առաջանում է նաև ամուսնության բացակայության դեպքում՝ ազգակցության հիման վրա: Ազգակցություն համարվում է արյունակցական ծագման վրա առաջացած մարդկանց ընդհանրությունը: Այդ տեսակետից ազգակցական կապերի մեջ են գտնվում ծնողներն ու զավակները՝ տղան, աղջիկը, պապը, տատը, թոռը, քույրերը, եղբայրները, մյուս ազգականները և այլն:

Որդեգրման հիման վրա նույնպես առաջանում է ընտանիք: Որդեգրումն իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների ու զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ ու պարտականություններ:

Ընդհանրացնելով՝ կարելի է ընտանիքը բնորոշել որպես անձանց միություն, ովքեր իրար հետ կապված են փոխադարձ սիրո ու համաձայնության վրա հիմնվող ամուսնական կապերով, գտնվում են արենակցական կամ այնպիսի հարաբերությունների մեջ, որոնց համար ծագում են ընտանեկան օրենսդրությամբ սահմանված իրավունքներ ու պարտականություններ:

Ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, իսկ ընտանեկան օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ համապատասխան պետական մարմինների կամ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից:

Ամուսինները հավասար են, արդյոք, ընտանիքում

Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում:

Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները համատեղ լուծում են՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից:

Ամուսիններն ընտանիքում պարտավոր են իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ օգնության և հարգանքի վրա, նպաստել ընտանիքի ամրությանը, հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության ու ներդաշնակ զարգացման համար:

Ամուսնանալիս ամուսինները, ըստ իրենց ցանկության, կարող են ամուսիններից մեկի ազգանունն ընտրել որպես ընդհանուր ազգանուն կամ պահպանել մինչամուսնական ազգանունը: Ամուսինների ընդհանուր ազգանունը կարող է լինել ամուսիններից մեկի ազգանունը կամ այնպիսի ազգանուն, որը ներառում է ամուսինների ազգանունները միաժամանակ: Ընդհանուր ազգանունը չի կարող լինել երկու ազգանունից ավելի: Ամուսիններից մեկի ազգանվան փոփոխությունը մյուս ամուսնու ազգանվան փոփոխություն չի առաջացնում:

Ինչ է ամուսնական պայմանագիրը և ինչպես է այն կնքվում

Ամուսնական պայմանագիրն ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականություններն ամուսնության և (կամ) այն լուծվելու ընթացքում:

Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել՝ ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում: Ամուսնության պետական գրանցումից առաջ կնքված ամուսնական պայմանագիրն ուժի մեջ է մտնում ամուսնության պետական գրանցման պահից: Ամուսնական պայմանագիրը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման:

Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են փոփոխել ընդհանուր սեփականության շրջանակը, սահմանել համատեղ, բաժնային կամ յուրաքանչյուրի սեփականություն՝ ամուսինների ողջ գույ-

քի, դրա առանձին տեսակների կամ ամուսիններից յուրաքանչյուրի գույքի նկատմամբ: Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես ամուսինների առկա, այնպես էլ հետագայում ձեռք բերվելիք գույքի նկատմամբ:

Ամուսիններն իրավունք ունեն ամուսնական պայմանագրով որոշելու միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտներին մասնակցելու եղանակները, իրենցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսեր կատարելու կարգը, այն գույքը, որ պետք է հանձնվի իրենցից յուրաքանչյուրին ամուսնալուծվելիս, ինչպես նաև իրավունք ունեն ամուսնական պայմանագրով նախատեսելու իրենց գույքային հարաբերություններին վերաբերող ցանկացած այլ նորմեր:

Ամուսնական պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները կարող են սահմանափակվել որոշակի ժամկետով կամ կախման մեջ դրվել որոշակի պայմանների վրա հասնելուց կամ հակառակը: Ամուսնական պայմանագիրը չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը, իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին:

Ամուսնական պայմանագիրն ամուսինների համաձայնությամբ կարող է փոփոխվել կամ լուծվել ցանկացած ժամանակ: Ամուսնական պայմանագիրը փոփոխվում և լուծվում է ամուսնական պայմանագիր կնքելու համար սահմանված կարգով: Ամուսնական պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարում չի թույլատրվում: Ամուսիններից մեկի պահանջով ամուսնական պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել դատական կարգով՝ պայմանագրերի փոփոխման և լուծման համար քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

Ամուսնական պայմանագրի գործողությունը դադարում է ամուսնության դադարման պահից, բացառությամբ այն պարտավորությունների, որոնք ամուսնական պայմանագրով նախատեսված են ամուսնությունը դադարելուց հետո ընկած ժամանակաշրջանի համար:

Դատարանը կարող է ամուսնական պայմանագիրն անվավեր ճանաչել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ գործարքների անվավերության մասին Քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով:

Դատարանը կարող է նաև ամուսնական պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչել ամուսիններից մեկի պահանջով, եթե այդ պայմանագրի պայմանները տվյալ ամուսնուն դնում են ծայրահեղ անբարենպաստ իրավիճակի մեջ:

Ամուսիններից մեկի պարտավորություններով բռնագանձում կարող է տարածվել միայն այդ ամուսնու գույքի նկատմամբ: Այդ գույքն անբավարար լինելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու ամուսինների ընդհանուր սեփականության մեջ պարտապան ամուսնու հասանելիք բաժնի առանձնացումը՝ դրա նկատմամբ բռնագանձում տարածելու համար:

Ամուսինների ընդհանուր գույքի նկատմամբ բռնագանձումը տարածվում է ամուսինների ընդհանուր պարտավորություններով: Եթե դատավճռով հաստատվել է, որ ամուսինների ընդհանուր գույքը ձեռք է բերվել կամ ավելացել է ամուսիններից մեկի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների հաշվին, ապա բռնագանձումը կարող է տարածվել համապատասխանաբար ամուսինների ընդհանուր համատեղ գույքի կամ դրա մի մասի վրա:

Ամուսինը պարտավոր է ծանուցել իր պարտատիրոջը (պարտատերերին) ամուսնական պայմանագրի կնքման, դրա փոփոխման կամ լուծման մասին: Այդ պարտականությունը չկատարելու դեպքում ամուսինը պատասխանատու է իր պարտավորություններով՝ անկախ ամուսնական պայմանագրի բովանդակությունից:

Պարտապան ամուսնու պարտատերը (պարտատերերը) իրավունք ունի պահանջելու փոփոխել իրենց միջև կնքված պայմանագրի պայմանները կամ լուծել պայմանագիրը՝ հանգամանքների էական փոփոխությունների պատճառով՝ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գլուխ 2

Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները

Որն է ծնողների և երեխաների իրավունքների ու պարտականությունների ծագման հիմքը

Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա: Երեխայի սերումը մորից (մայրությունը) հաստատվում է երեխայի՝ բժշկական կազմակերպությունում տվյալ մորից ծնված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի, իսկ եթե երեխան ծնվել է բժշկական կազմակերպությունից դուրս՝ համապատասխան բժշկական փաստաթղթերի, վկաների հայտարարությունների կամ այլ ապացույցների հիման վրա:

Միմյանց հետ ամուսնության մեջ գտնվող անձանցից, ինչպես նաև ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուց հետո կամ երեխայի մոր ամուսնու մահվան պահից հետո երեք հարյուր օրվա ընթացքում երեխա ծնվելու դեպքում երեխայի հայր է ճանաչվում երեխայի մոր ամուսինը (նախկին ամուսինը), եթե այլ բան չի ապացուցվել: Երեխայի մոր ամուսնու (նախկին ամուսնու) հայրությունը հավաստվում է նրանց ամուսնության պետական գրանցումով:

Երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի հայրությունը որոշվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա: Մոր մահվան կամ դատարանի կողմից վերջինիս անգործունակ ճանաչվելու կամ բնակության վայրը որոշելու անհնարինության կամ ծնողական իրավունքներից զրկվելու դեպքում երեխայի հայրությունը որոշվում է երեխայի հոր դիմումի հիման վրա՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով:

Այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ երեխայի ծնվելուց հետո հայրությունը որոշելու մասին համատեղ դիմում ներկայացնելը կարող է դառնալ անհնար կամ դժվարանալ, ապագա երեխայի ծնողները, որոնք ամուսնության մեջ չեն գտնվում, քաղաքացիական կացության ակտերի

պետական գրանցում իրականացնող մարմին նման դիմում կարող են ներկայացնել մոր հղիության ընթացքում: Այդ դեպքում երեխայի ծնողների մասին գրառումը կատարվում է երեխայի ծնվելուց հետո:

Չափահաս անձի նկատմամբ հայրության որոշում թույլատրվում է միայն իր համաձայնությամբ, իսկ եթե նա դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ՝ նրա խնամակալի (հոգաբարձուի) կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ:

Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) որոշվում է դատական կարգով՝ համապատասխանաբար ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան, իսկ երեխայի չափահաս դառնալուց հետո՝ վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա: Այս դեպքում դատարանը հաշվի է առնում ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի այդ անձից:

Իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում վերջինիս որպես երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը կարող է հաստատվել դատական կարգով՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված նորմերով:

Ծնողներն ունեն, արդյոք, հավասար իրավունքներ ու պարտականություններ

Ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

Ծնողական իրավունքները դադարում են երեխաների տասնութ տարեկանը լրանալով, ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալու, օրենքով նախատեսված կարգով մինչև չափահաս դառնալը երեխաների կողմից լրիվ գործունակություն ձեռք բերելու դեպքերում:

Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու և նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ: Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս

ծնողներից երեխա ծնվելու դեպքում, ինչպես նաև նրանց մայրությունը և (կամ) հայրությունը որոշելիս ծնողները ամուսնության տարիքը լրանալուց հետո կարող են ինքնուրույն իրականացնել ծնողական իրավունքները: Մինչև անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Երեխայի խնամակալի և անչափահաս ծնողների միջև առաջացած տարաձայնությունները կարգավորում է խնամակալության և հոգաբարձության մարմինը: Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը և մայրությունը:

Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք: Ծնողները պարտավոր են ապահովել երեխաների կրթություն ստանալը:

Ծնողները, երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ, ունեն կրթական հաստատության և երեխաների ուսուցման ձևի ընտրության իրավունք մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը:

Ովքեր կարող են իրականացնել երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը

Երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դրվում է նրանց ծնողների վրա: Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան: Ծնողական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու

երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը: Ծնողական իրավունքներն ի վնաս երեխաների իրավունքների և շահերի իրականացնող ծնողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ծնողները (նրանցից մեկը) փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կարող են առկա տարաձայնությունները լուծելու համար դիմել խնամակալության և հոգաբարձության մարմին կամ դատարան:

Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Երեխայից առանձին ապրող ծնողը իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը: Ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին:

Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը:

Դատարանի վճիռը չարամտորեն չկատարելու դեպքում երեխայից առանձին ապրող ծնողի պահանջով դատարանը կարող է որոշում կայացնել երեխան նրան հանձնելու մասին՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:

Երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի իր երեխայի մասին տեղեկատվություն ստանալու դաստիարակչական ու բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից, ինչպես նաև ծնողից, որի մոտ ապրում է երեխան: Տեղեկատվություն տրամադրելը կարող է մերժվել միայն ծնողի կողմից երեխայի կյանքին և առողջությանն սպառնացող վտանգի առկայության դեպքում: Տեղեկատվություն տրամադրելու մերժումը կարող է վիճարկվել դատական կարգով:

Խորթ ծնողները պարտավոր են դաստիարակել և խնամել իրենց ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված և իրենց հետ համատեղ ապրող երեխաներին (խորթ երեխաներին):

Երեխայի պապերը, տատերը, եղբայրները, քույրերը և այլ ազգականներն իրավունք ունեն շփվելու երեխայի հետ: Մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին՝ չխանգարելու այդ շփմանը: Եթե ծնողները կամ նրանցից մեկը չեն կատարում խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը, երեխայի մերձավոր ազգականները կարող են երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու հայցով դիմել դատարան: Դատարանը վեճը լուծում է՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:

Երբ են ծնողները զրկվում ծնողական իրավունքներից

Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝

ա) չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց,

բ) առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից,

գ) չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա,
դ) դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ, ոտնձգում են նրանց սեռական անձեռնմխելիությունը,
ե) տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ,
զ) կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն:

Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատական կարգով: Ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ գործերը քննվում են ծնողներից մեկի (օրինական ներկայացուցչի), ինչպես նաև այն մարմինների ու կազմակերպությունների (խնամակալության և հոգաբարձության մարմինների, որբ երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար նախատեսված կազմակերպությունների և այլնի) դիմումի հիման վրա, որոնց վրա դրված են երեխաների իրավունքների պաշտպանության պարտականությունները: Ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերը քննվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

Եթե դատարանը ծնողական իրավունքներից զրկելու գործը քննելիս ծնողների կամ նրանցից մեկի գործողություններում հայտնաբերում է քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ, ապա այդ մասին պարտավոր է տեղեկացնել համապատասխան իրավասու մարմիններին:

Ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում դատարանը պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել երեխայի ծննդի պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

Ծնողական իրավունքներից զրկված ծնողները կորցնում են այն երեխայի հետ ազգակցության փաստի վրա հիմնված բոլոր իրավունքները, որի նկատմամբ ծնողական իրավունքներից նրանք զրկվել են (ընդ որում՝ նրանցից ապրուստի միջոց ստանալու, ինչպես նաև երեխաներ ունեցող քաղաքացիների համար սահմանված արտոնությունների ու պետական նպաստների իրավունքները):

Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում իրենց երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից: Երեխայի և ծնո-

ղական իրավունքներից զրկված ծնողների կամ նրանցից մեկի հետագայում համատեղ ապրելու մասին հարցը լուծվում է դատական կարգով: Ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու դեպքում երեխան պահպանում է բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իր իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը, ինչպես նաև ծնողների և այլ ազգականների հետ ազգակցականության կապի վրա հիմնված գույքային իրավունքները (ընդ որում՝ ժառանգություն ստանալու իրավունքը):

Եթե անհնարին է երեխային հանձնել մյուս ծնողին, կամ երկու ծնողներն էլ ծնողական իրավունքներից զրկվել են, ապա նա հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի խնամքին:

Ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու դեպքում երեխային որդեգրել թույլատրվում է ոչ շուտ, քան ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեց ամիս հետո:

Երբ կարող են վերականգնվել ծնողական իրավունքները

Ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձևը և (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը:

Ծնողական իրավունքները վերականգնվում են դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա: Ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերը քննվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

Ծնողական իրավունքների վերականգնման մասին դիմումի հետ միաժամանակ կարող է քննության առնվել նաև երեխային ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու մասին պահանջը:

Տասը տարին լրացած երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ հաշվի առնելով նրա կարծիքը: Դատարանը, հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը, իրավունք ունի մերժելու ծնողական իրավունքների վերականգնման հայցը, եթե ծնողական իրավունքների վերականգնումը հակասում է երեխայի շահերին:

Ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է, և որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել:

Ելնելով երեխայի շահերից՝ դատարանը կարող է վճիռ կայացնել ծնողներից (ծնողներից մեկից) երեխային վերցնելու մասին (ծնողական իրավունքների սահմանափակում)՝ առանց ծնողական իրավունքներից զրկելու:

Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից (հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդություն, ծանր հանգամանքների առկայություն և այլն):

Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար: Եթե ծնողները կամ նրանցից մեկը չփոխեն իրենց վարքագիծը, խնամակալության և հոգաբարձության մարմինը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո պարտավոր է հայց ներկայացնել ծնողական իրավունքներից զրկելու մասին: Խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց ներկայացնել մինչև այդ ժամկետը լրանալը՝ ելնելով երեխայի շահերից:

Ծնողական իրավունքների սահմանափակման մասին հայց կարող են ներկայացնել երեխայի մերձավոր ազգականները, այն մարմիններն ու կազմակերպությունները, որոնց վրա օրենքով դրված են երեխաների իրավունքների պաշտպանման պարտականություններ, նախադպրոցական, հանրակրթական և այլ կազմակերպություններ: Ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերը քննվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ: Ծնողների կամ նրանցից մեկի ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում դատարանը պարտավոր է վճռի քաղվածքն ուղարկել երեխայի ծննդի պետական գրանց-

ման քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

Ծնողները, որոնց ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կորցնում են երեխային անձամբ դաստիարակելու իրավունքը, ինչպես նաև երեխաներ ունեցող քաղաքացիների համար սահմանված արտոնություններ ու պետական նպաստներ ստանալու իրավունքը:

Ծնողական իրավունքների սահմանափակումը ծնողներին չի ազատում երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից:

Ծնողների կամ նրանցից մեկի ծնողական իրավունքների սահմանափակման դեպքում երեխան պահպանում է բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իր իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը, ինչպես նաև ծնողների և այլ ազգականների հետ ազգակցականության կապի վրա հիմնված գույքային իրավունքները (ընդ որում՝ ժառանգություն ստանալու իրավունքը):

Ծնողների ծնողական իրավունքների սահմանափակման դեպքում երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների խնամքին:

Ծնողներին, որոնց ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կարող է թույլատրվել կապ ունենալ երեխայի հետ, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա: Երեխայի հետ ծնողների շփումը թույլատրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի, խնամատար ծնողների կամ երեխայի խնամակալի (հոգաբարձուի) կամ այն կազմակերպության ղեկավարի կամ նրան փոխարինողի համաձայնությամբ, որտեղ գտնվում է երեխան:

Գլուխ 3

Ընտանիքի անդամների ալիմենտային պարտավորությունները

Ծնողները պարտավոր են, արդյոք, հոգալու իրենց երեխաների ապրուստը

Ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին: Երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում են ինքնուրույն: Ծնողները կարող են համաձայնություն կնքել իրենց երեխաներին պահելու մասին (ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն:

Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով:

Որքան կարող է լինել երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը

Երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով՝ հետևյալ չափերով ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով՝

ա) մեկ երեխայի համար ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ քառորդը.

բ) երկու երեխաների համար՝ մեկ երրորդը.

գ) երեք և ավելի երեխաների համար՝ կեսը:

Ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից:

Նշված բաժինների չափերը կարող են դատարանով նվազեցվել կամ ավելացվել՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

Ծնողների միջև երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում դատարանն իրավունք ունի բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանելու կայուն դրամական գումարով կամ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով:

Վերոնշյալ նորմերը կիրառվում են, եթե այդ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին, ինչպես նաև այն դեպքերում, երբ երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը՝

ա) ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ.

բ) վաստակ և (կամ) այլ եկամուտ է ստանում բնամթերքի տեսքով կամ արտարժույթով.

գ) վաստակ և (կամ) այլ եկամուտ չի ստանում կամ չունի:

Կայուն դրամական գումարի չափը որոշում է դատարանը՝ ելնելով երեխայի նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունից՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտը բռնագանձվում և վճարվում է երեխաների խնամակալին (հոգաբարձուին):

Առանց ծնողական խնամքի մնացած և դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող երեխաների համար ծնողներից բռնագանձվող ալիմենտները փոխանցվում են այդ կազմակերպությունների հաշվին, որտեղ դրանք հաշվառվում են յուրաքանչյուր երեխայի համար առանձին:

Նշված կազմակերպությունները կարող են այդ գումարները պահել բանկում: Ալիմենտի գումարի շրջանառությունից ստացված եկամտի հիսուն տոկոսը օգտագործվում է նշված կազմակերպություններում երեխաներին պահելու համար: Կազմակերպությունը, երբ երեխան թողնում է այն, նրա անունով ստացված ալիմենտի գումարը և այդ

գումարի շրջանառությունից ստացված եկամտի հիսուն տոկոսը փոխանցում է երեխայի անվամբ բացված բանկային հաշվին:

Ծնողները պարտավոր են ապրուստի միջոցներ տրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող անաշխատունակ չափահաս զավակներին:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում անաշխատունակ չափահաս զավակների համար ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս՝ ելնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից:

Համաձայնության բացակայության և բացառիկ հանգամանքների առկայության (ծանր հիվանդություն, երեխաների կամ անաշխատունակ չափահաս անապահով զավակների խեղում, նրանց նկատմամբ հատուկ խնամքի համար վճարելու անհրաժեշտություն և այլն) դեպքում ծնողներից յուրաքանչյուրը կարող է դատարանի վճռով ներգրավվել այդ հանգամանքներից բխող լրացուցիչ ծախսեր կրելու գործին:

Լրացուցիչ ծախսերը կրելուն ծնողների մասնակցության կարգը և այդ ծախսերի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը՝ ելնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս:

Դատարանը կարող է պարտավորեցնել ծնողներին՝ մասնակցելու ինչպես փաստացի կատարվող լրացուցիչ ծախսերին, այնպես էլ ապագայում կատարվելիք անհրաժեշտ լրացուցիչ ծախսերին:

Աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են, արդյոք, պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին

Աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում օգնության կարիք ունեցող ծնողների համար նրանց

չափահաս աշխատունակ զավակներից ալիմենտը բռնագանձվում է դատական կարգով: Զավակներից յուրաքանչյուրից բռնագանձվող ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը՝ ելնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս: Չափահաս զավակներից յուրաքանչյուրի առնչությամբ ալիմենտի չափը որոշելիս դատարանը կարող է հաշվի առնել տվյալ ծնողի չափահաս աշխատունակ բոլոր զավակներին, անկախ նրանից, թե պահանջը ներկայացվել է նրանցից մեկի, մի քանիսի, թե բոլորի դեմ:

Զավակները կարող են ազատվել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողների ապրուստը հոգալու պարտականությունից, եթե դատարանի վճռով կհաստատվի, որ ծնողները ժամանակին խուսափել են իրենց ծնողական պարտականությունները կատարելուց:

Անաշխատունակ ծնողների հանդեպ չափահաս աշխատունակ զավակների կողմից հոգատարության բացակայության և բացառիկ հանգամանքների (ծնողի ծանր հիվանդություն, խեղում ստանալ, նրանց կողմնակի խնամքի համար վճարելու անհրաժեշտություն և այլն) առկայության դեպքում նրանք կարող են դատարանի վճռով մասնակից դարձվել այդ հանգամանքներից բխող լրացուցիչ ծախսերը կրելու գործին: Չափահաս աշխատունակ զավակներից յուրաքանչյուրի կողմից լրացուցիչ ծախսերը կրելու կարգը և այդ ծախսերի չափը որոշում է դատարանը՝ հաշվի առնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը: Լրացուցիչ ծախսերը կրելու կարգը և այդ ծախսերի չափը կարող են որոշվել կողմերի համաձայնությամբ:

Գլուխ 4

Ամուսինների, նախկին ամուսինների և ընտանիքի մյուս անդամների ալիմենտային պարտավորությունները

Ամուսիններն ունեն, արդյոք, միմյանց ապրուստի միջոցները հոգալու պարտականություններ

Ամուսինները պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց: Այդպիսի օժանդակությունը մերժվելու և ալիմենտ վճարելու վերաբերյալ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դրա համար անհրաժեշտ միջոցներ ունեցող մյուս ամուսնուց դատական կարգով ալիմենտ պահանջելու իրավունք ունի՝

ա) անաշխատունակ անապահով ամուսինը.

բ) կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը.

գ) անապահով ամուսինը, որ խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ չափահաս զավակին:

Ամուսինն իրավունք ունի, արդյոք, ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուց ալիմենտ ստանալու իրավունք

Նախկին ամուսնուց, որը նյութական բավարար միջոցներ ունի, դատական կարգով ալիմենտի պահանջի իրավունք ունի՝

ա) նախկին կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը.

բ) անապահով նախկին ամուսինը, որը խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ զավակին.

գ) անաշխատունակ անապահով նախկին ամուսինը, որը հաշմանդամ է դարձել մինչև ամուսնալուծվելը կամ ամուսնալուծվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում.

դ) անապահով ամուսինը, որը կենսաթոշակային տարիքի է հասել ամուսնալուծության պահից սկսած հինգ տարում, եթե ամուսինները տասնհինգ և ավելի տարի գտնվել են ամուսնության մեջ:

Ալիմենտի չափը և ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուն դա տրամադրելու կարգը կարող է որոշվել նախկին ամուսինների համաձայնությամբ:

Ամուսինների (նախկին ամուսինների) միջև ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում ամուսնուց (նախկին ամուսնուց) դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը՝ ելնելով ամուսինների (նախկին ամուսինների) գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս:

Դատարանը կարող է ամուսնուն ազատել մյուս անաշխատունակ անապահով ամուսնուն օգնություն ցույց տալու պարտականությունից կամ սահմանափակել այդ պարտականությունը որոշակի ժամանակով ինչպես ամուսնության ընթացքում, այնպես էլ ամուսնալուծությունից հետո, եթե օգնության կարիք ունեցող ամուսնու անաշխատունակությունը վրա է հասել՝

ա) ոգելից խմիչքի, թմրամիջոցի և (կամ) թունամիջոցի չարաշահման կամ նրա կողմից դիտավորյալ հանցագործություն կատարելու հետևանքով.

բ) ամուսինների՝ միմյանց հետ ամուսնության մեջ գտնվելու՝ մեկ տարուց ոչ ավելի ժամանակահատվածում.

գ) ալիմենտի վճարում պահանջող ամուսնու՝ ընտանիքում հակաբարոյական վարքագիծ (ամուսնական դավաճանություն, մոլախաղերով զբաղվել և այլն) ցուցաբերելու հետևանքով:

Ընտանիքի անդամներն ինչ ալիմենտային պարտականություններ ունեն միմյանց նկատմամբ

Օգնության կարիք ունեցող անչափահաս եղբայրներն ու քույրերը իրենց ծնողներից ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում բավարար միջոցներ ունեցող իրենց չափահաս աշխատունակ եղբայրներից ու քույրերից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն: Նույնպիսի իրավունք տրվում է նաև օգնության կարիք ունեցող չափահաս անաշխատունակ եղբայրներին ու քույրերին, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից, ամուսնուց (նախկին ամուսնուց) կամ ծնողներից:

Օգնության կարիք ունեցող անչափահաս թոռներն իրենց ծնողներից ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում անհրաժեշտ միջոցներ ունեցող իրենց պապերից ու տատերից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն: Նույնպիսի իրավունք տրվում է օգնության կարիք ունեցող չափահաս անաշխատունակ թոռներին, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց ամուսիններից (նախկին ամուսիններից) կամ ծնողներից:

Օգնության կարիք ունեցող անաշխատունակ պապերը և տատերն իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսնուց (նախկին ամուսնուց) ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում անհրաժեշտ միջոցներ ունեցող իրենց չափահաս աշխատունակ թոռներից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն:

Անաշխատունակ անապահով անձինք, ովքեր իրականացրել են երեխաների փաստացի խնամքը, դատական կարգով իրենց չափահաս գործունակ երեխաներից ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունեն, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսնուց (նախկին ամուսնուց):

Դատարանը կարող է երեխաներին ազատել փաստացի խնամողներին ապրուստի միջոց տրամադրելուց, եթե փաստացի խնամողները նրանց խնամել ու դաստիարակել են հինգ տարուց պակաս ժամկետով, ինչպես նաև, եթե նրանք այդ երեխաներին խնամել ու դաստիարակել են ոչ պատշաճ ձևով:

Օգնության կարիք ունեցող անաշխատունակ խորթ հայրը և խորթ մայրը, որ դաստիարակել ու պահել են իրենց խորթ զավակներին, իրավունք ունեն դրա համար անհրաժեշտ բավարար միջոցներ ունեցող չափահաս աշխատունակ խորթ զավակներից դատական կարգով պահանջելու ապրուստի միջոց, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսիններից (նախկին ամուսիններից):

Դատարանը կարող է խորթ զավակներին ազատել խորթ հորն ու խորթ մորը պահելու պարտականությունից, եթե վերջիններս հինգ տարուց պակաս են դաստիարակել կամ խնամել նրանց, ինչպես նաև, եթե նրանք պատշաճ ձևով չեն կատարել խորթ զավակներին պահելու և դաստիարակելու իրենց պարտականությունները:

Ինչպես է կնքվում ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը

Ալիմենտ վճարելու վերաբերյալ (ալիմենտի չափի, վճարման պայմանների ու կարգի մասին) համաձայնությունը կնքվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի և խնամակալի (ալիմենտ ստացողի) միջև, իսկ ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող անձի և (կամ) ալիմենտ ստացողի անգործունակ լինելու դեպքում՝ այդ անձանց օրինական ներկայացուցիչների միջև: Սահմանափակ գործունակ անձինք ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն են կնքում իրենց օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն կնքելու, կատարելու, փոփոխելու, լուծելու և անվավեր ճանաչելու նկատմամբ կիրառվում են քաղաքացիաիրավական գործարքների կնքման, կատարման, փոփոխման, լուծման և անվավեր ճանաչման վերաբերյալ քաղաքացիական օրենսդրության նորմերը:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը ցանկացած ժամանակ կարող է փոփոխվել կամ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը փոփոխելու կամ լուծելու ձևը պետք է համապատասխանի այն կնքելու ձևին: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը միակողմանիորեն փոփոխել կամ լուծել չի թույլատրվում:

Կողմերի գույքային և ընտանեկան դրության էական փոփոխությունների, ինչպես նաև ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության փոփոխման կամ լուծման վերաբերյալ անհամաձայնության դեպքում շահագրգիռ կողմն այդ համաձայնության փոփոխման կամ լուծման հայցով դատարան դիմելու իրավունք ունի: Ալիմենտ վճարելու համաձայնության փոփոխման կամ լուծման հարցը որոշելիս դատարանը կարող է հաշվի առնել կողմերի՝ ուշադրության արժանի ցանկացած շահ:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ վճարվող ալիմենտի չափը որոշում են կողմերը: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ երեխաների համար որոշվող ալիմենտի չափը չի

կարող պակաս լինել նրանց համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափից:

Ալիմենտ վճարելու ձևերն ու կարգը որոշվում են ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ: Ալիմենտը կարող է վճարվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի վաստակի և (կամ) այլ եկամտի նկատմամբ բաժնային չափով, պարբերաբար վճարվող կայուն դրամական գումարով, միանվագ վճարվող կայուն դրամական գումարով, գույք տրամադրելու միջոցով, ինչպես նաև այլ ձևերով, որոնց համար համաձայնություն է կայացվել: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության մեջ կարող է նախատեսվել ալիմենտ վճարելու տարբեր ձևերի համակցում:

Ինչ կարգով է վճարվում և բռնագանձվում ալիմենտը

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում ընտանիքի անդամները կարող են ալիմենտ բռնագանձելու պահանջով դիմել դատարան:

Ալիմենտ ստանալու իրավունք ունեցող անձը կարող է ալիմենտի բռնագանձման համար դիմել դատարան՝ անկախ ալիմենտի իրավունքի առաջացման պահից անցած ժամանակահատվածից, եթե ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ նախկինում ալիմենտ չի վճարվել:

Ալիմենտ հատկացվում է դատարան դիմելու պահից: Անցած ժամանակահատվածի համար ալիմենտ կարող է բռնագանձվել դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար, եթե դատարանով հաստատվել է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապրուստի միջոց ստանալու համար, բայց ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով:

Ալիմենտ բռնագանձելու գործով դատարանը կարող է ալիմենտ բռնագանձելու որոշում կայացնել մինչև ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, իսկ երեխաների համար ալիմենտ բռնագանձելիս՝ մինչև ալիմենտ բռնագանձելու մասին վճիռ կայացնելը:

Բռնագանձվող ալիմենտի չափը որոշում է դատարանը՝ ելնելով կողմերի գույքային և ընտանեկան դրությունից:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կամ կատարողական թերթի հիման վրա ալիմենտ վճարելու պարտավոր անձի աշխատավայրի (կազմակերպության) վարչակազմը պարտավոր է յուրաքանչյուր ամիս ալիմենտ պահել այդ անձի աշխատավարձից և (կամ) այլ եկամտից և վճարել կամ դրանք փոխանցել ալիմենտ ստացողին՝ ալիմենտ վճարելու պարտավոր անձին աշխատավարձի և (կամ) այլ եկամտի վճարման պահից ոչ ուշ՝ եռօրյա ժամկետում:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության հիման վրա ալիմենտի պահում կարող է կատարվել նաև այն դեպքում, եթե նման համաձայնության կամ կատարողական թերթի հիման վրա պահումների ընդհանուր գումարը գերազանցում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի վաստակի և (կամ) այլ եկամտի հիսուն տոկոսը:

Դատարանի վճռի կամ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության հիման վրա ալիմենտի պահում կատարող կազմակերպության վարչակազմը պարտավոր է եռօրյա ժամկետում ալիմենտ բռնագանձելու մասին վճռի կատարման վայրի դատական ակտերի հարկադիր կատարողին և ալիմենտ ստացողին հաղորդել ալիմենտ վճարելու պարտավոր անձի աշխատանքից ազատվելու, ինչպես նաև նրա աշխատանքի նոր վայրի կամ բնակության վայրի մասին, եթե դրանք իրեն հայտնի են:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ կամ դատարանի վճռով սահմանված չափով ալիմենտի բռնագանձումը, ինչպես նաև ալիմենտային պարտքի բռնագանձումը կատարվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի վաստակից և (կամ) այլ եկամտից: Վաստակի և (կամ) այլ եկամտի անբավարարության դեպքում ալիմենտ պահվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի՝ բանկերում կամ այլ վարկային կազմակերպություններում գտնվող դրամական միջոցներից, ինչպես նաև առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին պայմանագրերով հանձնված դրամական միջոցներից, բացի այն պայմանագրերից, որոնք առաջացնում են սեփականության իրավունքի փոխանցում: Այդ միջոցների անբավարարության դեպքում բռնագանձում տարածվում է ալիմենտ վճարելու պարտավոր անձի

ցանկացած այն գույքի վրա, որի վրա օրենքով կարող է բռնագանձում տարածվել:

Ալիմենտ վճարելու պարտավոր անձի բանկային հաշիվներում գտնվող դրամական միջոցների և նրա այլ գույքի վրա բռնագանձում տարածելը կատարվում է քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ինչպես է որոշվում ալիմենտային պարտքը

Անցած ժամանակի համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության կամ կատարողական թերթի հիման վրա ալիմենտի բռնագանձում կատարվում է ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը կամ կատարողական թերթը ներկայացնելուն նախորդած եռամյա ժամկետի ընթացքում: Եթե կատարողական թերթի կամ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության հիման վրա ալիմենտի պահում չի կատարվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով, ապա ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով ողջ ժամանակահատվածի համար:

Ալիմենտային պարտքի չափը որոշում է դատական ակտերի հարկադիր կատարողը՝ ելնելով դատարանի վճռով որոշված ալիմենտի չափից:

Երեխաների համար վճարվող ալիմենտային պարտքի չափը որոշվում է՝ ելնելով ալիմենտ վճարելու պարտավոր անձի վաստակից և (կամ) այլ եկամտից այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում ալիմենտի բռնագանձում չի կատարվել: Եթե ալիմենտ վճարելու պարտավոր անձն այդ ժամանակահատվածում չի աշխատել, կամ եթե չներկայացվեն նրա վաստակը և (կամ) այլ եկամուտը հաստատող փաստաթղթեր, ալիմենտային պարտքը որոշվում է՝ ելնելով դրա բռնագանձման պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափից: Եթե ալիմենտային պարտքի չափի նման որոշումը էապես խախտում է կողմերից մեկի շահերը, ապա կողմը, որի շահերը խախտվել են, կարող է դիմել դատարան: Դատարանը, ելնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից, որոշում է ալիմենտային պարտքը՝ կայուն դրամական գումարով:

Կողմերի համաձայնության հիման վրա ալիմենտ վճարելու դեպքում ալիմենտային պարտքը վճարելուց ազատելը կամ պակասեցնելը հնարավոր է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ երեխաների համար ալիմենտ վճարելու դեպքերի:

Դատարանը կարող է ալիմենտ վճարելու պարտավոր անձի հայցով նրան լրիվ կամ մասամբ ազատել ալիմենտային պարտքը վճարելուց, եթե կհաստատի, որ ալիմենտ չվճարելը եղել է այդ անձի հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով, և նրա գույքային ու ընտանեկան դրությունը հնարավորություն չի տալիս մարելու կուտակված ալիմենտային պարտքը:

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձը պատասխանատվություն է կրում այդ համաձայնությամբ նախատեսված կարգով: Դատարանի վճռով ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձը ալիմենտ ստացողին ուշացրած յուրաքանչյուր օրվա համար տուգանք է վճարում չվճարված ալիմենտի գումարի 0,05 տոկոսի չափով:

Ալիմենտ ստացողը կարող է ալիմենտ վճարելու պարտավոր և ալիմենտը ժամանակին չվճարելու համար մեղավոր անձից բռնագանձելու պահանջ ներկայացնել նաև ալիմենտային պարտավորությունների կատարման ուշացմամբ պատճառված վնասների այն մասով, որ չեն ծածկվում տուգանքով:

Կարող է, արդյոք, փոփոխվել դատարանի սահմանած ալիմենտի չափը

Եթե ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայությամբ ալիմենտի չափը դատական կարգով որոշելուց հետո փոփոխվել է կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրությունը, ապա դատարանը կարող է յուրաքանչյուր կողմի պահանջով փոփոխել ալիմենտի սահմանված չափը կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձին ազատել դա վճարելուց: Ալիմենտի չափը փոփոխելիս կամ դա վճարելուց ազատելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև կողմերի՝ ուշադրության արժանի շահերը:

Դատարանը կարող է չափահաս գործունակ անձի օգտին ալիմենտի բռնագանձումը մերժել, եթե հաստատվի, որ նա ալիմենտ վճարելու պարտավոր անձի նկատմամբ կատարել է դիտավորյալ հանցագործություն, կամ չափահաս գործունակ անձն ընտանիքում դրսևորել է հակաբարոյական վարքագիծ:

Երբ կարող են դադարել ալիմենտային պարտավորությունները

Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ սահմանված ալիմենտային պարտավորությունները դադարում են կողմերից մեկի մահվան դեպքում՝ այդ համաձայնության գործողության ժամկետի լրանալով կամ այդ համաձայնությամբ նախատեսված այլ հիմքերով:

Դատական կարգով բռնագանձվող ալիմենտի վճարումը դադարում է՝

ա) երեխայի չափահաս դառնալով կամ մինչև չափահասության հասնելը երեխաների լրիվ գործունակություն ձեռք բերելով.

բ) երեխային որդեգրելիս, որի ապրուստի համար բռնագանձվում էր ալիմենտը.

գ) ալիմենտ ստացողի աշխատունակությունը վերականգնվելիս կամ կարիքավորությունը դադարելիս.

դ) անաշխատունակ, օգնության կարիք ունեցող և ալիմենտ ստացող նախկին ամուսնու նոր ամուսնություն կնքելիս.

ե) ալիմենտ ստացող անձի կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մահվամբ:

Գլուխ 5

Խնամատար ընտանիք

Ինչ է խնամատար ընտանիքը

Հայտնի են ծնողազուրկ երեխաների, ինչպես նաև ծնողներ ունեցող, սակայն նրանցից պատշաճ դաստիարակություն ու խնամք չստացող երեխաների դաստիարակությունն ու խնամքը կազմակերպելու տարբեր եղանակներ: Դրանցից է նաև նման երեխաների դաստիարակությունն ու խնամքն առանձին անհատների և ընտանիքների կողմից ստանձնելը:

Խնամատար ընտանիքը ձևավորվել է ընտանեկան տիպի մանկական տների ստեղծման գաղափարի հիման վրա: Նախատեսելով խնամատարական ընտանիքի ինստիտուտը՝ պետությունն ինքն է ընտանիքներ ընտրում, որոնք ցանկություն կհայտնեն պահել մանկատուն կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների:

Խնամատար ընտանիքն առաջանում է դաստիարակության համար երեխային ընտանիք հանձնելու մասին պայմանագրի հիման վրա: Այդ պայմանագրով քաղաքացիները, մասնավորապես՝ ամուսինները, խնամակալության ու հոգաբարձության մարմնի հետ կնքված պայմանագրի հիման վրա, կամավոր հիմունքներով, վերցնում են առանց ծնողական խնամքի մնացած, այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող երեխաներին:

Ամուսինների կամ առանձին անհատ անձանց կողմից ծնողազուրկ կամ ծնողական խնամքից ու դաստիարակությունից զրկված երեխաների դաստիարակության ու խնամքի համար ընտանիք ընդունելու արդյունքում երեխաների ու նրանց դաստիարակների միջև առաջանում են որոշակի իրավունքներ ու պարտականություններ, իրականում՝ փաստական դաստիարակի ու փաստական սանի հարաբերություններ:

Պետք է նշել, որ խնամատար ընտանիքում առաջացող հարաբերությունները տարբերվում են որդեգրումից բխող հարաբերություններից: Ինչպես հայտնի է, մինչև ՀՀ ընտանեկան օրենսգրքի ընդունումը որդեգրման հարաբերություններն առաջանում էին վարչական ակտի

հիման վրա, քանի որ որդեգրումը կատարվում էր համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի որոշմամբ: Վարչական ակտի հիման վրա են առաջանում նաև խնամակալի (հոգաբարձուի) և խնամարկյալի միջև հարաբերությունները: Մինչդեռ խնամատար ընտանիքում առաջացող հարաբերությունների հիմքում ընկած է պայմանագիրը:

Խնամատար ընտանիքի մասին կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Երեխային (երեխաներին) խնամատար ընտանիքում դաստիարակվելու նպատակով հանձնում են մինչև նրա չափահաս դառնալը՝ պայմանագրով նախատեսված ժամկետով:

Դաստիարակության համար երեխային (երեխաներին) ընտանիք հանձնելու մասին պայմանագրով պետք է նախատեսվեն երեխայի (երեխաների) ապրուստի, դաստիարակության և կրթության պայմանները, խնամատար ծնողների իրավունքներն ու պարտականությունները, խնամատար ընտանիքի նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտականությունները, ինչպես նաև այդ պայմանագրի դադարման հիմքերն ու հետևանքները:

Հոգեզավակների խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողներին տրվող վարձատրության չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ովքեր են դաստիարակության համար երեխային ընտանիք հանձնելու մասին պայմանագրի կողմերը

Դաստիարակության համար երեխային (երեխաներին) ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած քաղաքացու և խնամակալական մարմնի միջև կնքված պայմանագիրն է: Նման պայմանագիր կնքելու իրավունք ունեն չափահաս գործունակ և ամուսնության մեջ գտնվող, ինչպես նաև միայնակ անձինք:

Երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրով քաղաքացին կամ ամուսինները պարտավորվում են դաստիարակության ու խնամքի համար որոշակի ժամկետով իրենց ընտանիք վերցնել խնամակալական մարմիններում հաշվառման վերցված ծնողազուրկ կամ ծնողական պատշաճ խնամք ու դաստիարակություն

չստացող երեխաներին, կազմակերպել նրանց խնամքն ու դաստիարակությունը, իսկ մյուս կողմը՝ խնամակալության ու հոգաբարձության մարմինը, պարտավորվում է նրան օժանդակել երեխայի դաստիարակությունն ու խնամքը կազմակերպելու գործում, հատուցել այդ նպատակով քաղաքացու կատարած ծախսերը և վարձատրել նրան:

Երեխային հանձնելու մասին պայմանագիրը կնքվում է մի կողմից խնամակալության ու հոգաբարձության մարմնի, մյուս կողմից՝ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իր վրա վերցնել ցանկացող քաղաքացիների՝ ամուսինների կամ անհատ քաղաքացու միջև: Այն քաղաքացիները, ովքեր վերցրել են առանց ծնողական խնամքի մնացած երեխային (երեխաներին), համարվում են խնամատար ծնողներ, խնամատար ընտանիք դաստիարակության համար հանձնվող երեխան (երեխաները) համարվում է հոգեզավակ: Խնամատար ծնողներից և հոգեզավակներից կազմված ընտանիքն անվանվում է խնամատար ընտանիք:

Ովքեր կարող են լինել խնամատար ծնողներ

Խնամատար ծնողներ կարող են լինել չափահաս ու գործունակ երկու սեռի քաղաքացիները:

Խնամատար ծնողներ չեն կարող լինել.

ա) օրենքով սահմանված կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,

բ) այն ամուսինները, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

գ) դատարանով ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական իրավունքները սահմանափակված անձինք,

դ) նրանք, ովքեր հեռացվել են խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունների կատարումից օրենքով իրենց վրա դրված պարտականություններն անբարեխղճորեն կատարելու համար,

ե) նախկին որդեգրողները, եթե որդեգրումը վերացվել է նրանց մեղքով,

զ) նրանք, ովքեր իրենց առողջական վիճակի պատճառով չեն կարող իրականացնել ծնողական իրավունքները,

է) անձինք, որոնք այդ պահին չունեն այնպիսի եկամուտ, որը կապահովի երեխայի նվազագույն կենսապայմանները,

ը) այն անձինք, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սանիտարական և տեխնիկական սահմանված պայմաններին,

թ) այն անձինք, ովքեր այդ պահին ունեն դատվածություն մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված դիտավորյալ հանցագործության համար:

Խնամատար ծնողները դաստիարակության հանձնված երեխայի (երեխաների) նկատմամբ ձեռք են բերում խնամակալի (հոգաբարձուի) իրավունքներ ու պարտականություններ:

Երբ է դադարում երեխաներին դաստիարակության համար ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը

Երեխաներին դաստիարակության համար ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը դադարում է դաստիարակվող երեխաների չափահաս դառնալու կամ պայմանագրով կոնկրետ որոշված ժամկետը լրանալու փաստով: Սակայն, ինչպես բազմաթիվ այլ պայմանագրեր, այս պայմանագիրը ևս կարող է լուծվել վաղակետ, կողմերի նախաձեռնությամբ: Այսպես, պայմանագիրը կարող է վաղակետ լուծվել խնամատար ծնողների նախաձեռնությամբ, հարգելի պատճառների առկայության դեպքում: Իսկ հարգելի պատճառներ համարվում են հիվանդությունը, ընտանեկան կամ գույքային դրության փոփոխվելը, երեխայի և խնամատար ծնողների միջև փոխադարձ ըմբռնման բացակայությունը, երեխայի և ընտանիքի մյուս անդամների, նույնիսկ երեխաների՝ միմյանց միջև բախումային (կոնֆլիկտային) վիճակները և այլն: Չի բացառվում նաև, որ խնամատար ծնողները պայմանագրի լուծում պահանջեն այն հիմքով, որ խնամակալության և հոգաբարձության մարմինները նույնպես չեն կատարում իրենց պարտականությունները:

Երեխաներին դաստիարակության համար ընտանիք հանձնելու պայմանագիրը կարող է վաղակետ լուծվել նաև խնամակալության և հոգաբարձության մարմինների նախաձեռնությամբ, եթե պարզվի, որ խնամատար ընտանիքում առաջացել են անբարենպաստ պայմաններ երեխայի (երեխաների) ապրուստի, դաստիարակության, կրթության համար, կամ երբ երեխաները վերադարձվում են հարազատ ծնողներին կամ երեխային որդեգրում է մեկ ուրիշը: Իսկ երեխան կարող է որդեգր-

վել ոչ միայն այլ անձանց, այլև հենց խնամատար ծնողների կողմից: Խնամատար ընտանիքին դաստիարակության հանձնված երեխայի որդեգրումն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ ընտանեկան օրենսդրությամբ սահմանված կարգով: Դաստիարակության համար երեխային ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը դադարում է որդեգրման պահից:

Որ երեխաները չեն կարող հանձնվել խնամատար ընտանիքին

Խնամատար ընտանիքին դաստիարակության համար հանձնվում է առանց ծնողական խնամքի մնացած (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող) երեխան (երեխաները):

Խնամատար ընտանիքին դաստիարակության չեն կարող հանձնվել սուր կամ քրոնիկ վարակիչ հիվանդությամբ տառապող երեխաները, եթե խնամատար ընտանիքը հակառակը չի պնդում:

Խնամատար ընտանիքին հանձնելու համար երեխայի (երեխաների) նախնական ընտրությունն իրականացնում են երեխային (երեխաներին) դաստիարակության համար ընտանիք ընդունել ցանկացող անձինք՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների համաձայնությամբ:

Արգելվում է եղբայրներին ու քույրերին առանձին խնամատար ընտանիքներ հանձնելը, բացառությամբ այն դեպքերի, եթե դա բխում է նրանց շահերից:

Երեխային (երեխաներին) խնամատար ընտանիք հանձնելն իրականացվում է՝ հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Խնամատար ընտանիք հանձնված երեխան (երեխաները) պահպանում է իրեն հասանելիք ալիմենտի, կենսաթոշակի նկատմամբ իրավունքը, ինչպես նաև բնակելի տարածության սեփականության, օգտագործման իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը:

Յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվում են դրամական միջոցներ՝ Հայաստանի Հան-

բապետության կառավարության սահմանած կարգով ու չափով: Յուրաքանչյուր երեխայի պահելու, ինչպես նաև խնամատար ծնողների աշխատանքի վարձատրության համար տրվող դրամական միջոցների ֆինանսավորումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է խնամատար ընտանիքին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն, նպաստել երեխայի (երեխաների) կյանքի ու դաստիարակության համար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև վերահսկողություն իրականացնել խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:

Բաժին III

Հրամաններ և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ

Գլուխ 1

ՀՀ Արդարադատության նախարարի հրաման

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
10 ապրիլի 2003 թ.
Պետական գրանցման թիվ 10203115

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«2» ապրիլի 2003թ. N 153-Ն ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արդարա-

դատության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1917-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրության» 8-րդ կետի իթ) ենթակետի համաձայն.

Հրամայում եմ՝

Սահմանել ազատազրկման վայրերում պահվող անձանց հետ ամուսնության գրանցման կարգը (Հավելված N 1):

Դ. Հարությունյան

Հավելված N 1

Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
2003 թվականի ապրիլի 2-ի թիվ 153-Ն հրամանով

Կ Ա Ր Գ
ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Դատապարտված, ձերբակալված կամ կալանավորված անձի (այսուհետ՝ ազատազրկված անձ) հետ ամուսնանալ ցանկացող անձը ամուսնանալու վերաբերյալ դիմում է տալիս իր մշտական բնակության վայրի կամ ուղղիչ հիմնարկի գտնվելու վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինը դիմումում և դիմողի ինքնությունը հաստատող փաստաթղթում նշված տեղեկությունները համեմատում է, հաստատում նրա ստորագրությունը ու դիմումը վերադարձնում է խնդրատուին՝ այն ուղղիչ հիմնարկ ուղարկելու և ազատազրկված անձին հանձնելու նպատակով:

Ազատազրկված անձի հետ ամուսնանալու վերաբերյալ դիմում ստանալիս ուղղիչ հիմնարկը այն հանձնում է ազատազրկված անձին՝ դիմումի այն մասը լրացնելու համար, որը վերաբերվում է իրեն: Դիմումի մեջ պակասող տեղեկությունները մտցնելուց հետո ուղղիչ հիմնարկի վարչակազմը դիմումում նշված տեղեկությունները համեմատում է ազատազրկված անձի անձնական գործի փաստաթղթերում նշված տեղեկությունների հետ, հաստատում է նրա ստորագրությունը և այն ուղարկում է ուղղիչ հիմնարկի գտնվելու վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին: Եթե դատապարտյալի անձնական գործում տեղեկություններ չկան նրա ընտանեկան դրության մասին կամ որոշ տեղեկություններ թերի են, միմյանց հակասող, ուղղիչ հիմնարկի վարչակազմը, միջոցներ է ձեռք առնում դրանք պահանջելու կամ ճշտելու ուղղությամբ:

2. Եթե ազատազրկված անձը ամուսնանալ է ցանկանում, ապա ուղղիչ հիմնարկի վարչակազմը պետք է նրան տրամադրի դիմումի ձև: Ազատազրկված անձի կողմից դիմումի իրեն վերաբերվող մասը լրացնելուց հետո, ուղղիչ հիմնարկի վարչակազմը դիմումի մեջ նշված տեղեկությունները համեմատում է ազատազրկված անձի անձնական գործի փաստաթղթերի հետ և հաստատում նրա ստորագրությունը: Դրանից հետո ուղղիչ հիմնարկի վարչակազմի կողմից դիմումն ուղարկվում է այն անձին, որի հետ ազատազրկված անձը ցանկանում է ամուսնանալ: Միաժամանակ տվյալ անձին հաղորդվում են ուղղիչ հիմնարկի գտնվելու վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի անվանումը և գտնվելու վայրը, որտեղ կարող է կատարվել ամուսնության գրանցումը:

Ամուսնանալուն համաձայն լինելու դեպքում այդպիսի դիմում ստացող անձը լրացնում է դիմումի այն մասը, որը վերաբերվում է իրեն և հանձնում իր բնակության վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին կամ ուղղիչ հիմնարկի գտնվելու վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին:

3. Ուղղիչ հիմնարկի գտնվելու վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինը, ընդունելով ամուսնանալու վերաբերյալ դիմումը, նշանակում է ամուսնության գրանցման

ժամանակը և այդ մասին նախօրոք իրազեկում է ամուսնանալ ցանկացող անձանց:

4. Ազատազրկված անձի հետ ամուսնության գրանցումը կատարվում է ամուսնացող անձանց ներկայությամբ, ուղղիչ հիմնարկի վարչական շենքում:

5. Ազատազրկված անձի հետ ամուսնացած անձին քաղաքացիական կացության ակտերի տարածքային բաժնի կողմից տրվում է վկայական ամուսնանալու մասին:

6. Ազատազրկված անձի անձնական գործում քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի կողմից նշում է կատարվում ամուսնության գրանցման մասին, ամուսնու անունը, ազգանունը, հայրանունը և ծննդյան ժամանակը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի անվանումը և ամուսնությունը գրանցելու ժամանակը:

Եթե ազատազրկված անձը ամուսնանալիս ընտրել է ամուսնու ազգանունը, ապա անձնական գործում ամուսնության գրանցման վերաբերյալ նշման տակ կատարվում է համապատասխան գրառում: Այդ դեպքում ազատազրկված անձի անձնագրի առաջին էջում նշում է կատարվում, որը հաստատվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի կլոր կնիքով:

7. Կարգապահական տույժի ենթարկված և այդ տույժը կրող ազատազրկված անձի հետ ամուսնության գրանցումը կարող է իրականացվել տույժի այդ միջոցը կրելուց հետո:

8. Ամուսնությունը գրանցելու համար քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինը գանձում է տուրք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

Գլուխ 2

ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/2177/02/08	Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/2177/02/08 2009թ.
Նախագահող դատավոր՝	Ա. Խառատյան
Դատավորներ՝	Վ. Ավանեսյան Կ. Չիլինգարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի
քաղաքացիական և վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ՝	Մ. Դրմեյանի
	Վ. Աբելյանի
	Ս. Անտոնյանի
	Ա. Բարսեղյանի
	Ե. Խունդկարյանի
	Է. Հայրիյանի
	Տ. Պետրոսյանի
	Ե. Սողոմոնյանի

2009 թվականի մայիսի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Դավիթ Ծաղիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Դավիթ Ծաղիկյանի ընդդեմ Գայանե Եսոյանի, երրորդ անձ Նոր Նորքի թաղային համայնքի խնամակալության և հոգեբարձության մարմնի՝ հայրության ճանաչման և երեխայի տեսակցություն սահմանելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Դավիթ Ծաղիկյանը պահանջել է ճանաչել իր հայրությունը Լև Դավիթի Եսոյանի (ծնված 08.05.2006 թվականին) նկատմամբ, ինչպես նաև սահմանել տեսակցության օրեր:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 12.11.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.02.2009 թվականի որոշմամբ Դատարանի 12.11.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Դավիթ Ծաղիկյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գայանե Եսոյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 36-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ կետը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բողոքը մերժելիս հիմք է ընդունել ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից տրված թիվ 97 փորձագիտական եզրակացությունը: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ նշված եզրակացության որոշ կետեր էականորեն հակասում են մեկը մյուսին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի և օբյեկտիվ չի գնահատել նաև երեխայի ծննդյան վկայականում հոր տվյալների տակ գրանցված իր անուն՝ ազգանունը, որը գրանցվել է Գայանե Եսո-

յանի դիմումի հիման վրա, ըստ որի՝ երեխայի հոր անուն՝ հայրանունն է «Դավիթ Վազգենի»: Այսպիսով, ակնհայտ է, որ ինքն է երեխայի հայրը: Երեխայի հայրությունը հաստատվում է նաև Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 06.11.2006 թվականի թիվ 2-4309 քաղաքացիական գործով կայացրած վճռով, որտեղ Գայանե Եսոյանը հայտարարել է, որ իրենց փաստական ամուսնական հարաբերությունների ընթացքում ծնվել է Լև Եսոյանը, և այդ վճիռն էլ անհրաժեշտ է Գայանե Եսոյանին իրեն որպես Լև Եսոյանի հայր ճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը իր միջնորդությունը՝ կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին, անհիմն կերպով մերժել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.02.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը իրավացիորեն հիմք է ընդունել ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից տրված թիվ 97 փորձագիտական եզրակացությունն այն մասին, որ «Դավիթ Ծաղիկյանի հայրությունը Լև Եսոյանի նկատմամբ բացառվում է»: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե ընդհանրապես ալելներ չլինելու, այլ դրանց անհամապատասխանության մասին, որ արդեն իսկ բացառում է ենթադրյալ հոր հայրությունը:

Ծնողների և երեխաների իրավունքները և պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա: Իսկ վեճի դեպքում նշված փաստը կարող է հաստատվել միայն համապատասխան դատագենետիկական փորձաքննության միջոցով, որը և սույն գործով իրականացվել է Դավիթ Ծաղիկյանի միջնորդությամբ:

Գայանե Եսոյանի ցուցումով երեխայի հոր անունն ու հայրանունը Դավիթ Ծաղիկյանի անվան և հայրանվան հետ համընկնելու փաստը, սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ երեխայի սերման փաստը պարզելու համար, վերաբերելի չէ, քանի որ

գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 06.11.2006 թվականի թիվ 2-4309 վճռի նկարագրական մասում նշված հանգամանքը չի կարող դիտվել որպես ստույգ հաստատում, որ Լև Եսոյանը սերվել է Դավիթ Ծաղիկյանից, քանի որ նշված վճռով դիմումը վերաբերել է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելուն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության Շենգավիթի տարածքային բաժնի կողմից տրված Լև Դավիթ Եսոյանի (ծնված 08.05.2006 թվականին) 11.05.2006 թվականի թիվ 674 ծննդյան վերաբերյալ ակտի գրանցման համաձայն՝ երեխայի հոր մասին տեղեկություններ սյունակում նշված է՝ անուն՝ Դավիթ, հայրանուն՝ Վազգեն (գ.թ. 7, հ. 1-ին):

2. Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 06.11.2006 թվականի թիվ 2-4309 օրինական ուժի մեջ մտած վճռի նկարագրական մասում նշվել է, որ 2005 թվականից Գայանե Եսոյանը փաստական ամուսնական հարաբերությունների մեջ է գտնվում Դավիթ Ծաղիկյանի հետ և նրա հետ, համատեղ կյանքում ունեցել են մեկ երեխա՝ Լև Դավիթի Եսոյան՝ ծնված 08.05.2006 թվականին (գ.թ. 13, հ.1-ին):

3. ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից տրված թիվ 97 փորձագիտական եզրակացության համաձայն՝ Դավիթ Ծաղիկյանի հայրությունը Լև Եսոյանի նկատմամբ բացառվում է (գ.թ. 98-100, հ.1-ին):

4. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի տեսուչ Կ. Սարգսյանի 21.05.2008 թվականի և 12.06.2008 թվականի եզրակացությունների համաձայն՝ 2005 թվականի օգոստոս ամ-

սից քաղաքացի Գայանե Եսոյանը փաստացի ամուսնացել է Դավիթ Ծաղիկյանի հետ, և մոտ 6 ամիս հետո իրենց հարաբերությունները սրվել են, որից հետո բաժանվել են: Դավիթ Ծաղիկյանը պարբերաբար գալիս է Գայանե Եսոյանի տուն՝ պատճառաբանելով, որ ուզում է տեսնել իր երեխային (գ.թ.57-58 հ.1-ին):

5. Գործում առկա դատական նիստի արձանագրության համաձայն՝ Դավիթ Վազգենի Ծաղիկյանը փորձագիտական եզրակացության արժանահավատության վերաբերյալ կասկածներ առաջանալու պատճառաբանությամբ դատարանում միջնորդել է կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին, որը դատարանի կողմից մերժվել է:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) որոշվում է դատական կարգով՝ համապատասխանաբար ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան, իսկ երեխայի չափահաս դառնալուց հետո՝ վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա: Այս դեպքում դատարանը հաշվի է առնում ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի այդ անձից:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ծնողների և երեխաների միջև իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմք է դիտում օրենքով սահմանված կարգով հաս-

տատված սերման փաստը՝ սահմանելով որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստի (հայրության) որոշման դատական կարգ: Ընդ որում, **այդ դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի անձից:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝

1. գրավոր ապացույցներով,

2. փորձագետների եզրակացություններով,

3. վկաների ցուցմունքներով,

4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր ապացույցները, **փորձագետների եզրակացությունները,** վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ են առաջանում փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ, ապա դատարանը միևնույն հարցի վերաբերյալ կարող է

նշանակել կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը բողոքի մերժման հիմքում դրել է ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից տրված թիվ 97 փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի՝ Դավիթ Ծաղիկյանի հայրությունը Լև Եսոյանի նկատմամբ բացառվում է:

Սույն գործում առկա են նաև 11.05.2006 թվականին կատարված Լև Եսոյանի ծննդյան վերաբերյալ ակտի թիվ 674 գրանցումը, համաձայն որի՝ երեխայի հոր մասին տեղեկություններ սյունակում նշված է՝ անուն՝ Դավիթ, հայրանուն՝ Վազգեն, ՀՀ ոստիկանության 21.05.2008 թվականի և 12.06.2008 թվականի եզրակացությունները, համաձայն որոնց 2005 թվականի օգոստոս ամսից քաղաքացի Գայանե Եսոյանը փաստացի ամուսնացել է Դավիթ Ծաղիկյանի հետ, և մոտ 6 ամիս հետո իրենց հարաբերությունները սրվել են, որից հետո բաժանվել են: Դավիթ Ծաղիկյանը պարբերաբար այցելել է Գայանե Եսոյանի տուն՝ պատճառաբանելով, որ ուզում է տեսնել իր երեխային: Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 06.11.2006 թվականի թիվ 2-4309 օրինական ուժի մեջ մտած վճիռը, որի նկարագրական մասում նշվել է, որ 2005 թվականից Գայանե Եսոյանը փաստական ամուսնական հարաբերությունների մեջ է գտնվում Դավիթ Ծաղիկյանի հետ, և նրա հետ համատեղ կյանքում ունեցել են մեկ երեխա՝ Լև Դավիթի Եսոյան՝ ծնված 08.05.2006 թվականին: Սույն գործի քննության ընթացքում Դավիթ Վազգենի Ծաղիկյանը փորձագիտական եզրակացության արժանահավատության վերաբերյալ կասկածներ առաջանալու պատճառաբանությամբ դատարանում միջնորդել է կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին, որը դատարանի կողմից մերժվել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և համադրելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում առկա վերը նշված փաստերը բողոք բերած անձի մոտ փորձագիտական եզրակացության արժանահավատության վերաբերյալ կասկածներ առաջացնող բավարար հանգամանքներ են, հետևաբար Դավիթ Ծաղիկյանը «Կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին» միջնորդություն ներկայացնե-

լով, ըստ էության օգտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասով և 49-րդ հոդվածի 2-րդ մասով, 62-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված ապացույց ներկայացնելու իր դատարավարական իրավունքից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նոր ապացույց ընդունելու Վերաքննիչ դատարանի իրավասությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի և 49-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով գործին մասնակցող յուրաքանչյուր անձն է կրում իր վկայակոչված փաստերի ապացուցման պարտականությունը: Անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերելու հնարավորություն չունենալու դեպքում գործին մասնակցող անձինք իրավունք ունեն տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան:

Նույն օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին» բողոք բերած անձի միջնորդությունը ուղղված էր սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող նոր ապացույց ձեռք բերելուն, որն առաջին ատյանի դատարանում Դավիթ Ծաղիկյանը հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իրենից անկախ պատճառներով, այն է՝ առաջին ատյանի դատարանում միջնորդությունը մերժվելու հետևանքով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարութ-

յան օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ **Ս. Սարգսյան**

Դատավորներ՝ **Մ. Դրմեյան**

Վ. Աբելյան

Ս. Անտոնյան

Ա. Բարսեղյան

Ե. Խունդկարյան

Է. Հայրիյան

Տ. Պետրոսյան

Ե. Սողոմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ԵԱՔԴ/1095/02/08

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1095/02/08 2009թ.

Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ Ե. Սողոմոնյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Է. Հայրիյանի
Տ. Պետրոսյանի

2009 թվականի դեկտեմբերի 4-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռազմիկ Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի, Մանե Ավետիսյանի հայցի ընդդեմ Ռազմիկ Հարությունյանի, Ամալյա Ստեփանյանի՝ երեխայի հետ շփման, խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու կարգ սահմանելու պահանջների մասին, և ըստ Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի հայցի ընդդեմ Ռազմիկ Հարությունյանի՝ երեխայի նկատմամբ

Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը սահմանափակելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը Սոֆյա Ավետիսյանին և Մերուժան Ավետիսյանին հանձնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սոֆյա, Մերուժան և Մանե Ավետիսյանները պահանջել են սահմանել երեխայի՝ 02.01.2005 թվականին ծնված Լուիզա Հարությունյանի հետ շփման, խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու կարգ:

Դիմելով դատարան՝ Սոֆյա և Մերուժան Ավետիսյանները պահանջել են սահմանափակել երեխայի՝ 02.01.2005 թվականին ծնված Լուիզա Հարությունյանի նկատմամբ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը և երեխայի խնամքն ու դաստիարակությունը հանձնել Սոֆյա և Մերուժան Ավետիսյաններին:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.03.2008 թվականի վճռով Սոֆյա և Մերուժան Ավետիսյանների հայցը՝ երեխայի նկատմամբ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը սահմանափակելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը Սոֆյա և Մերուժան Ավետիսյաններին հանձնելու պահանջների մասին, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.06.2008 թվականի որոշմամբ Սոֆյա և Մերուժան Ավետիսյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է բեկանել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.03.2008 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 28.07.2008 թվականի որոշմամբ նշված քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.12.2008 թվականի վճռով հայցերը բավարարվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.05.2009 թվականի որոշմամբ Ռազմիկ Հարությունյանի և Ամալյա Ստեփանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Դատարանի 11.12.2008 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռազմիկ Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Սոֆյա, Մերուժան և Մանե Ավետիսյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը, 51-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 63-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը սույն գործով ծանր հանգամանք է համարել Ռազմիկ Հարությունյանի եղբոր կողմից Ռազմիկ Հարությունյանի առաջին կնոջ՝ անչափահաս Լուիզա Հարությունյանի մոր սպանությունը: Մինչդեռ, նշված իրավիճակը ոչ մի դեպքում չի կարող դիտարկվել որպես ծանրացնող հանգամանք, քանի որ խոսքը գնում է միանգամայն տարբեր անձանց մասին: ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքներից է անձնական պատասխանատվության սկզբունքը, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ իր կատարած արարքի համար: Ռազմիկ Հարությունյանը, թեև Գրիգոր Հարությունյանի եղբայրն է, պատասխանատու չէ վերջինիս արարքների համար: Ավելին, Ռազմիկ Հարությունյանը ևս տուժել է Գրիգոր Հարությունյանի արարքներից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Դատարանի կայացրած վճռով Ռազմիկ Հարությունյանը կորցնում է

երեխային անձամբ դաստիարակելու իրավունքը: Դատարանի վճիռը խախտում է նաև անչափահաս Լուիզա Հարությունյանի իրավունքները, քանի որ վերջինիս ընտանիքն իր հայրն է, որի խնամքից երեխային զրկելը ոչնչով արդարացված չէ, ՀՀ ոչ մի օրենսդրական ակտով նշված չէ հոր ծնողական իրավունքների սահմանափակման նման հնարավորություն: Բացի այդ, Դատարանը հաստատված է համարել այն փաստը, որ Ռազմիկ Հարությունյանը, լինելով օրինավոր հայր, կատարում է բոլոր պարտականությունները, հետևաբար չկա ոչ մի փաստ, որը կվկայեր Ռազմիկ Հարությունյանի իրավունքների սահմանափակման անհրաժեշտության մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը և այն Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների սահմանափակման և վերջինիս շփումը Լուիզա Հարությունյանի հետ երեխայի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայությամբ թույլատրելու մասով փոփոխել՝ հայցը մերժել, իսկ մնացած մասով գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել են, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածը, որը սահմանում է, որ ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք, ինքնին չի բացառում այլ անձանց կողմից երեխային դաստիարակելու հնարավորությունը: Այդ պնդումը հաստատվում է նաև նույն օրենսգրքի 63-րդ հոդվածով, որի բովանդակությունից ավելի քան հստակ է, որ ծնողներից մեկի կամ երկուսի ծնողական իրավունքներն էլ դատական կարգով կարող են սահմանափակվել:

Հետևաբար հիմնավոր չեն բողոքի փաստարկներն այն մասին, թե Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, և որ կիրառել է նույն օրենսգրքի 63-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, թե Վերաքննիչ դատարանը, երեխայի մոր սպանության փաստը գնահա-

տելով որպես ծանր հանգամանք, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, ապա այն ակնհայտ անհիմն է, քանի որ երեխայի հայրը՝ Ռազմիկ Հարությունյանը, քաջատեղյակ լինելով իր եղբոր թմրամոլ և հոգեկան հիվանդ լինելու մասին, որևէ միջոց չի ձեռնարկել իր ընտանիքը նրա ոտնձգություններից զերծ պահելու ուղղությամբ: Ավելին, Ռազմիկ Հարությունյանի եղբայրը Ֆրանսիայի իշխանությունների կողմից քրեական պատասխանատվության չի ենթարկվել, վերջինս տեղավորվել է հարկադիր բուժման, այսինքն՝ չկա որևէ երաշխիք, որ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքները չսահմանափակվելու դեպքում նա չի շարունակի շփումները եղբոր հետ, իսկ այնուհետև երեխային մասնակից չի դարձնի այդ շփումներին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Սոֆյա և Մերուժան Ավետիսյանները Լիաննա Ավետիսյանի ծնողներն են: Լիաննա Ավետիսյանը 2004 թվականին ամուսնացել է Ռազմիկ Հարությունյանի հետ, և նրանք բնակություն են հաստատել Ֆրանսիայում: Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում վերջիններս ունեցել են մեկ երեխա՝ 02.01.2005 թվականին ծնված Լուիզա Հարությունյանին: Լիաննա Ավետիսյանի և Ռազմիկ Հարությունյանի հետ Ֆրանսիայում բնակվել է նաև Ռազմիկ Հարությունյանի եղբայրը՝ Գրիգոր Հարությունյանը: Վերջինս սպանել է Լիաննա Ավետիսյանին՝ մարմնական վնասվածքներ հասցնելով նաև Ռազմիկ Հարությունյանին: Գրիգոր Հարությունյանի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում՝ Լիաննա Հարությունյանի սպանության և Ռազմիկ Հարությունյանի նկատմամբ սպանության փորձ կատարելու համար: Գործով նշանակվել է դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննություններ, որոնց արդյունքում պարզվել է, որ Գրիգոր Հարությունյանը տառապում է քրոնիկ փսիխոզով՝ արտահայտված մտավոր և հոգեկան խանգարումներով: Վերջինիս կատարած հանցագործությունը պայմանավորված էր այդ խանգարումներով, և նա ենթակա չէ քրեա-

կան պատժի և պետք է բուժվի մասնագիտացված հոգեբուժական հաստատությունում: Նշված դեպքից հետո Ֆրանսիայի սոցիալական ծառայությունը վերցրել է Լուիզա Հարությունյանին իր հովանավորության տակ՝ ժամանակավորապես տեղավորելով մանկատանը:

2) Ֆրանսիայի Հանրապետության Թուլուզի վերաքննիչ դատարանի 20.02.2006 թվականի դաստիարակչական աջակցության դատավճռի (տեղավորման դադարեցում) համաձայն՝ ,դադարեցվել է Լուսիա Արությունյանի տեղավորումը Օտ Գարոնի ,Սոցիալական օգնություն մանկությանը ծառայությունում: Նույն դատավճռով նշվել է, որ ,պարոն Արությունյանն ընդունել է պայմանագրային կարգով դաստիարակչական աջակցությունը (հատ. 1, գ.թ. 27):

3) ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 06.06.2007 թվականի դատավճռով Սոֆյա Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ (երեխային առանց ծնողների համաձայնության նրանցից բաժանելը) և դատապարտվել է ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամանակով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան 1 տարի ժամկետով (հատ. 1, գ.թ. 132-134):

4) ՀՀ առողջապահության նախարարությանը կից ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 05.12.2007 թվականի թիվ 323/07 բժշկական եզրակացության համաձայն՝ Ռազմիկ Հարությունյանը որևէ հոգեկան հիվանդությամբ չի տառապել և չի տառապում: Նույն եզրակացության համաձայն՝ Ռազմիկ Հարությունյանը որևէ նարկոլոգիական հիվանդությամբ չի տառապում (հատ. 2, գ.թ. 117-120):

5) Երևանի Արաբկիր թաղային համայնքի ղեկավարը 21.11.2008 թվականի ,Անչափահաս Լուիզա Հարությունյանի խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու և Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքները սահմանափակելու մասին թիվ 157 որոշմամբ, հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից կատարված երեխայի կյանքի պայմանների հետազոտության ակտը, ելնելով վերոնշյալ հանգամանքներից, անչափահասի շահերից, ղեկավարվելով ՀՀ ընտանեկան

օրենսգրքի 56-րդ, 57-րդ հոդվածների պահանջներով և ՀՀ կառավարության 22.06.2006 թվականի թիվ 922-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Համայնքի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի 14.11.2008 թվականի թիվ 46 որոշումը, նպատակահարմար է գտել և թույլատրել է Սոֆյա, Մերուժան և Մանե Ավետիսյաններին մասնակցելու անչափահաս Լուիզա Հարությունյանի խնամքին ու դաստիարակությանը հետևյալ կարգով՝ յուրաքանչյուր երկուշաբթի և չորեքշաբթի օրերին՝ ժամը 16:00-ից մինչև 20:00-ն և ուրբաթ օրը ժամը 17:00-ից մինչև շաբաթ օրը ժամը 17:00-ն՝ առանց որևէ անձի միջամտության: Նույն որոշմամբ առաջարկվել է Դատարանին արգելել Լուիզա Հարությունյանին Հայաստանի Հանրապետությունից դուրս հանել որևէ այլ երկիր մինչև նրա 10 տարին լրանալը: Նշված որոշմամբ նշվել է նաև, որ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքները սահմանափակելու նպատակահարմարության մասին Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը եզրակացություն տալ չի կարող՝ նրա արտերկրում գտնվելու պատճառով (հատ. 2, գ.թ. 252):

6) Ֆրանսիայի Հանրապետության Թուլուզի՝ երեխաների գործերով դատարանի փոխնախագահ Էրիկ Լ'Ելգուլաշի՝ Լուսիա Արությունյանի դրությանը վերաբերող գրությամբ նշվել է, որ ,2006թ. հունվարի 15-ի որոշմամբ Լուսիան հրատապ կարգով տեղավորվել է Երեխաների սոցիալական օգնության բաժին՝ հաշվի առնելով մոր մահը և հոր հոսպիտալացումը, որը ծանր վիրավորվել էր և չէր կարող զբաղվել երեխայով այդ ժամանակահատվածում: Ուժեղ ցնցված այդ սպանությամբ՝ պարոն Արությունյանը չի ցանկացել այլևս մնալ համատեղ բնակության վայրում, որտեղ տեղի է ունեցել սպանությունը: Հենց որ նա «Լե Գիտ դը լ'Էքսկլյուզ» միության միջոցով ստացել է նոր բնակարան, ես հրահանգել եմ փոխել բնակարանը 2006թ. փետրվարի 20-ի վճռով, որպեսզի զբաղվի իր աղջկանով: Նա համաձայնվել է իրականացնել դաստիարակչական հսկողություն որոշակի ժամանակահատվածում՝ իր վրա վերցնելով իր դստեր հարմարվելը: Ես ճշտում եմ, որ սա բացառապես չի նշանակում, որ նա ի վիճակի չէր նրան դաստիարակել բավարար ձևով, այլ խոսքը գնում է ծանր ժամանակահատվածում սովորական օգնության մասին կապված իր կնոջ ծանր մահվան հետ: Բացի այդ, եթե ես համաձայնվել եմ արագ կերպով աղջկան հանձնել նրան,

ապա նա ուներ բոլոր երաշխիքները նրանով զբաղվելու համարե (հատ. 3, գ.թ. 74):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

Նշված կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու (որքան դա հնարավոր է), իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց

հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել նրա շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք:

Նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

Նշված օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ելնելով երեխայի շահերից՝ դատարանը կարող է վճիռ կայացնել ծնողներից (ծնողներից մեկից) երեխային վերցնելու մասին (ծնողական իրավունքների սահմանափակում)՝ առանց ծնողական իրավունքներից զրկելու, իսկ վերոգրյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից (հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդություն, ծանր հանգամանքների առկայություն և այլն): Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հար-

գելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Երեխաների և ծնողների նշված իրավունքների լիարժեք իրականացման և ծնողների նշված պարտականությունների պատշաճ կատարման հրամայականից ելնելով՝ ծնողների համար երաշխավորված է նաև այլ անձանց հանդեպ իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունքը: Նշվածի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ: Հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը և նրան երաշխավորված իրավունքների գերակայությունը՝ օրենսդիրը սահմանել է ծնողական իրավունքների սահմանափակման հնարավորություն, որը կարող է կիրառել միայն դատարանը՝ ելնելով երեխայի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից: Մասնավորապես, ծնողական իրավունքները թույլատրվում է սահմանափակել, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդությունը, ծանր հանգամանքների առկայությունը և այլն: Ծնողական իրավունքները թույլատրվում է սահմանափակել նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքները, որ Դատարանը, կատարելով գործի փաստական հանգամանքների բազմակողմանի քննություն, համադրելով գործով ձեռք բերված բոլոր ապացույցները, իրավացիորեն հանգել է այն հետևության, որ 02.01.2005 թվականին ծնված Լուիզա Հարությունյանի խնամքն ու դաստիարակությունն ավելի պատշաճ կի-

բականացվի հարազատ պապու և տատու կողմից: Դատարանի նման դիրքորոշումը հիմնավորված է բավարար ապացույցներով, մասնավորապես, Դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ երեխայի հոր՝ Ռազմիկ Հարությունյանի կարգավիճակը Ֆրանսիայի Հանրապետությունում դեռևս պարզ չէ, վերջինս չունի մշտական աշխատանք, ուսանող է, ապրում է պետությունից ստացվող թոշակով, ունի նոր ընտանիք, նրա խնամքին է գտնվում կինը և երկրորդ ամուսնությունից ծնված անչափահաս երեխան: Դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ երեխայի մայրը սպանվել է Ռազմիկ Հարությունյանի եղբոր կողմից, որը մշտապես բնակվել է իրենց հետ: Երեխայի հորեղբայրը տառապում է հոգեկան հիվանդությամբ, և չկա ոչ մի երաշխիք նրա կողմից այլ նոր հանցավոր արարքների չկատարման: Դատարանի նման դիրքորոշումը միանգամայն օրինաչափ է և միանշանակ բխում է երեխայի շահերից: Անվիճելի փաստ է, որ երեխայի հորեղբայրը տառապում է հոգեկան հիվանդությամբ: Վերջինս Լուիզա Հարությունյանի մոր սպանության համար չի ենթարկվել քրեական պատասխանատվության, այլ ուղարկվել է հարկադիր բուժման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոգեկան հիվանդության պատճառով չի հասկացել իր գործողությունները և դրանց հետևանքները: Անվիճելի փաստ է նաև այն, որ Գրիգոր Հարությունյանը Ֆրանսիայի Հանրապետությունում չունի այլ հարազատներ, բացի եղբորից՝ Ռազմիկ Հարությունյանից:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանություններն անհիմն են, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը հանգել է չհիմնավորված և սխալ հետևության, քանի որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների սահմանափակման համար առկա չէ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված որևէ հիմք, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը խախտել է ինչպես անչափահաս Լուիզա Հարությունյանի՝ ծնողի հետ համատեղ ապրելու և դաստիարակվելու, ծնողի հոգատարությանն արժանանալու և ծնողից դաստիարակություն ստանալու իրավունքները, այնպես էլ Ռազմիկ Հարությունյանի՝ այլ անձանց հանդեպ երեխային դաստիարակելու նախապատվության, երեխայի դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար հոգ

տանելու իրավունքները և պարտականությունները: Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է միայն, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից, որը դրսևորվում է հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդությամբ, ծանր հանգամանքների առկայությամբ և այլ հանգամանքներով, որոնք պետք է հաշվի առնի դատարանը՝ ելնելով կոնկրետ գործի ողջ փաստական տվյալներից, իսկ տվյալ դեպքում այդպիսի հանգամանքներ առկա չեն: Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար, իսկ տվյալ դեպքում առկա չէ որևէ ապացույց, որը կհավաստեր, որ Լուիզա Հարությունյանին Ռազմիկ Հարությունյանի մոտ թողնելը վերջինիս վարքագծի հետևանքով կարող է վտանգավոր լինել երեխայի համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը Ռազմիկ Հարությունյանի եղբոր կողմից Ռազմիկ Հարությունյանի առաջին կնոջ՝ Լուիզա Հարությունյանի մոր սպանությունը դիտել է ծանր հանգամանքի առկայություն: Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն՝ Լիաննա Ավետիսյանին սպանել է Գրիգոր Հարությունյանը՝ Ռազմիկ Հարությունյանի եղբայրը, հետևաբար վերջինիս ծնողական իրավունքները չեն կարող սահմանափակվել այլ անձի՝ նույնիսկ եղբոր կատարած հանցանքի համար, քանի որ Գրիգոր Հարությունյանի հանցանքը որևէ կերպ կապված չէ Ռազմիկ Հարությունյանի անձի հետ, ավելին, վերջինս նույնպես տուժվել է այդ հանցագործությունից՝ ստացել է մարմնական վնասվածքներ, ուստի այն չի կարող դիտվել որպես ծանր հանգամանքի առկայություն:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ Դատարանը հաշվի է առել այն հանգամանքները, որ երեխայի հոր՝ Ռազմիկ Հարությունյանի կարգավիճակը Ֆրանսիայի Հանրապետությունում դեռևս պարզ չէ, վերջինս չունի մշտական աշխատանք, ուսանող է, ապրում է պետությունից ստացվող թոշակով, ունի նոր ընտանիք, նրա խնամքին է գտնվում կինը և անչափահաս երե-

խան, ապա նշված հանգամանքները նույնպես չեն կարող հիմք հանդիսանալ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների սահմանափակման համար, քանի որ Ռազմիկ Հարությունյանը պետությունից ստանում է թոշակ, հետևաբար վերջինս զրկված չէ իր երեխայի բարեկեցության ապահովման համար անհրաժեշտ հոգատարություն ապահովելու հնարավորությունից, իսկ սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհավաստեր, որ Ռազմիկ Հարությունյանը չի կարող հոգ տանել Լուիզա Հարությունյանի դաստիարակության, առողջության, լիարժեք և ներդաշնակ զարգացման և կրթության մասին, ինչպես նաև ապահովել երեխայի լավագույն շահերը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել նաև գործում առկա Ֆրանսիայի Հանրապետության Թուլուզի երեխաների գործերով դատարանի փոխնախագահ Էրիկ Լ'Ելգուլաշի՝ Լուսիա Արությունյանի դրությանը վերաբերող գրությանը, որով հաստատվում է, որ նույն գրությամբ նշվածը բացառապես չի նշանակում, որ Ռազմիկ Հարությունյանն ի վիճակի չէր Լուիզա Հարությունյանին դաստիարակել բավարար ձևով, այլ խոսքը գնում է ծանր ժամանակահատվածում սովորական օգնության մասին՝ կապված Ռազմիկ Հարությունյանի կնոջ ծանր մահվան հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել են Լուիզա Հարությունյանի և Ռազմիկ Հարությունյանի երաշխավորված իրավունքները, քանի որ առանց օրենքով սահմանված հիմքի առկայության սահմանափակվել է վերջինիս ծնողական իրավունքները, ինչի հետևանքով երեխան զրկվել է ծնողի հետ համատեղ ապրելու և դաստիարակվելու, ծնողի հոգատարությանն արժանանալու և իր ծնողից դաստիարակություն ստանալու իրավունքներից:

Միաժամանակ հաշվի առնելով Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների սահմանափակման վերացման հետևանքները, մասնավորապես, Ռազմիկ Հարությունյանի համար Լուիզա Հարությունյանի հետ առանց որևէ սահմանափակման տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու հնարավորությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Դատարանի վճռով Սոֆյա, Մերուժան և Մանե Ավետիսյաններին թույլատրվել է մասնակցելու Լուիզա Հարությունյանի խնամքին

և դաստիարակությանը, ու սահմանվել է տեսակցության և խնամքի կարգ, որը Դատարանի սահմանած ձևով կարող է խոչընդոտել Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքների լիարժեք իրականացմանը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված մասերով գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Վերոնշյալ պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ, 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2009 թվականի որոշումը և այն փոփոխել. Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի հայցը՝ երեխայի նկատմամբ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը սահմանափակելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը Սոֆյա Ավետիսյանին և Մերուժան Ավետիսյանին հանձնելու պահանջների մասին, մերժել, իսկ Լուիզա Հարությունյանի հետ շփման, խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու կարգի մասով գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սոֆյա և Մերուժան Ավետիսյաններից հօգուտ Ռազմիկ Հարությունյանի բռնագանձել 5.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ **Ս. Սարգսյան**
Դատավորներ **Ե. Սողոմոնյան**
Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Է. Հայրիյան
Տ. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ
թիվ ԵԷԴ/1325/02/09

Քաղաքացիական գործ
թիվ ԵԷԴ/1325/02/09
2010թ.

Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան

Դատավորներ՝ Գ. Մատինյան
Լ. Գրիգորյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ
դատարանի քաղաքացիական և վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Ծ. Աբելյանի
Խ. Անտոնյանի
Ծ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Կ. Ժետրոսյանի
Ե. Խողոմոնյանի

2010 թվականի հոկտեմբերի 1-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վարդուհի Ոսկանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.03.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարդուհի Ոսկանյանի ընդդեմ Քրիստինե, Նարինե և Վարդան Մանուկյանների՝ Աշոտ Մանուկյանի կողմից կենդանության օրոք Մարինա Ոսկանյանի նկատմամբ հայրությունը ճանաչելու փաստը հաստատելու և այդ փաստը հաստատելու հիմքով Աշոտ Մանուկյանի ժառանգական գույքի 1/4 բաժնի նկատմամբ Մարինա Ոսկանյանի կողմից ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վարդուհի Ոսկանյանը պահանջել է հաստատել Աշոտ Մանուկյանի կողմից կենդանության օրոք Մարինա Ոսկանյանի նկատմամբ հայրությունը ճանաչելու փաստը և այդ փաստը հաստատելու հիմքով Աշոտ Մանուկյանի ժառանգական գույքի 1/4 բաժնի նկատմամբ Մարինա Ոսկանյանին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.12.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.03.2010 թվականի որոշմամբ Դատարանի 14.12.2009 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարդուհի Ոսկանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Քրիստինե, Նարինե և Վարդան Մանուկյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 36-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 37-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի հետազոտել և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա մի շարք ապացույցներ, մասնավորապես այն, որ Աշոտ Մանուկյանը Երևանի Էրեբունու շրջանի ժողդատարանի 06.06.1996 թվականի վճռի հիման վրա ամուսնալուծվել է նախկին կնո-

ջից: 1996 թվականից Աշոտ Մանուկյանը գտնվել է քաղաքացիական ամուսնական հարաբերությունների մեջ Վարդուհի Ոսկանյանի հետ: 18.05.1998 թվականին ծնվել է նրանց դուստր Մարինա Ոսկանյանը, որի խնամքով և դաստիարակությամբ զբաղվել է Աշոտ Մանուկյանը, ինչը հաստատվում է մի շարք ապացույցներով:

Սակայն, Վերաքննիչ դատարանը ,երեխայի հայր ճանաչելու համար միակ վերաբերելի ապացույց է համարել երեխայի հոր գրավոր հայտարարությունը, մինչդեռ սույն պարագայում պետք է հաշվի առնել անձի սուբյեկտիվ վերաբերմունքը երեխայի նկատմամբ, որը կարող էր դրսևորվել ոչ միայն գրավոր նամակներով և հայտարարություններով, այլ նաև օրենքով սահմանված այլ ապացույցներով, ինչպես նաև անձի որոշակի գործողություններով, որոնք հիմք են տալիս հստակորեն ասելու (հիմնավորելու), որ տվյալ անձը հանդիսանում է երեխայի հայրը և իրեն ընդունում է որպես երեխայի հայր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.03.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 14.12.2009 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն, գործում առկա յուրաքանչյուր ապացույց գնահատել է գործի բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, պարզել է վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը, որի արդյունքում կայացրել է հիմնավորված որոշում: Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման: Մարինա Ոսկանյանի առողջական վիճակով և դաստիարակության հարցերով համապատասխանաբար պոլիկլինիկա ու դպրոց հաճախելու և հետաքրքրվելու, ընդհանրապես այդ երեխայի նկատմամբ հոգատար ու հայրական վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ մյուս փաստաթղթերը, հայցվորի կողմից հարցաքննված վկաների հայտարարություններն ու ցուցմունքները վկայում են միայն

Աշոտ Մանուկյանի մարդկային պահվածքի և երեխաների նկատմամբ ուշադիր վերաբերմունքի մասին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Էրեբունու շրջանի ժողդատարանի 06.06.1996 թվականի վճռի հիման վրա Արուսյակ Հակոբյանը և Աշոտ Մանուկյանն ամուսնալուծվել են (1-ին հատոր, գ.թ.105):

2) Արարատյան հայրապետական թեմի հոգևոր հովվի տեղեկանքի համաձայն՝ Աշոտ Մանուկյանը և Վարդուհի Ոսկանյանը 07.07.1996 թվականին պսակադրվել են Քանաքեռի սուրբ Հակոբ եկեղեցում (հատոր 1-ին, գ.թ. 19):

3) Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի բնակ-կոմունալ բաժնի լիազոր ներկայացուցչի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ 1996 թվականից Երևանի Քանաքեռ 10-րդ փողոցի թիվ 4/6 տանը Վարդուհի Ոսկանյանի հետ համատեղ բնակվել են նրա ամուսին Աշոտ Մանուկյանը և 1998 թվականին ծնված նրանց դուստր Մարինա Ոսկանյանը (հատոր 1-ին, գ.թ. 10):

4) Մարինա Աշոտի Ոսկանյանը ծնվել է 18.05.1998 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 7):

5) Երևանի քաղաքապետարանի ,Քանաքեռ-Զեյթունե բժշկական կենտրոն ՓԲ ընկերության տեղամասի մանկաբույժի 22.07.2008 թվականին տրված թիվ 86 տեղեկանքի համաձայն՝ Մարինա Ոսկանյանը 11 տարի գտնվել է բժշկական հսկողության տակ և որպես երեխայի ծնողներ ճանաչել է Աշոտ Մանուկյանին և Վարդուհի Ոսկանյանին (հատոր 1-ին, գ.թ. 21):

6) Երևանի Կոստան Զարյանի անվան թիվ 117 միջնակարգ դպրոցի տնօրենի տեղեկանքի համաձայն՝ Մարինա Աշոտի Ոսկանյանը սովորում է նույն դպրոցի 7-րդ դասարանում, դպրոցի տնօրինությունն Աշոտ Մանուկյանին ճանաչել և ընդունել է որպես երեխայի հայր, Աշոտ Մանուկյանը «պարբերաբար ներկայացել է դպրոց, հետաքրքրվել երեխայի ուսման առաջադիմությամբ, երկարօրյա պարապմունք-

ներից հետո տարել տուն: Հայրը հաճախ էր հպարտանում, հիանում իր դուստր Մարինայով, ուրախանում նրա հաջողություններով» (հատոր 1-ին, գ.թ. 20):

7) Հարևանների և բարեկամների կողմից տրված 28.07.2009 և 17.09.2009 թվականների հայտարարությունների համաձայն՝ Աշոտ Մանուկյանը և Վարդուհի Ոսկանյանը 1996 թվականից համատեղ բնակվել են Քանաքեռ թիվ 10 փողոց 4/6 տանը (հատոր 1-ին, գ.թ.12-17, 59-64):

8) Առկա են լուսանկարներ, որտեղ Աշոտ Մանուկյանը պատկերված է Մարինա Ոսկանյանի, Վարդուհի Ոսկանյանի, բարեկամների և ընկերների հետ ընտանեկան միջավայրում (հատոր 1-ին, գ.թ 73-74):

9) Աշոտ Մանուկյանը մահացել է 04.07.2009 թվականին (հատոր 2-րդ, գ.թ 5):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝

1. գրավոր ապացույցներով,

2. փորձագետների եզրակացություններով,

3. վկաների ցուցմունքներով,

4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ իրեն երեխայի հայր **ճանաչած**, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում վերջինիս որպես երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը կարող է հաստատվել դատական կարգով քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված նորմերով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը ծնողների և երեխաների միջև իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմք է դիտում օրենքով սահմանված կարգով կենդանության օրոք որպես երեխայի հայր հանդես գալու փաստը՝ սահմանելով երեխայի հայրության որոշման դատական կարգ: Ընդ որում, այդ դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ իր կենդանության ժամանակ հոր կողմից ընդունվել է երեխայի հայրության **ճանաչման փաստը:**

Դատարանը Վարդուհի Ոսկանյանի հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ 1996 թվականից Աշոտ Մանուկյանը և Վարդուհի Ոսկանյանը գտնվել են ամուսնական փոխհարաբերությունների մեջ և բնակվել են Վարդուհի Ոսկանյանի տանը, համատեղ բնակվելու և ընդհանուր տնտեսություն վարելու ժամանակ 1998 թվականին ծնվել է Մարինա Աշոտի Ոսկանյանը, ում խնամքով և դաստիարակությամբ զբաղվել է Աշոտ Մանուկյանը, ինչը հաստատվում է գործով ձեռք բերված մի շարք ապացույցներով:

Վերաքննիչ դատարանը Քրիստինե, Նարինե, Վարդան Մանուկյանների վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանել է, որ Աշոտ Մանուկյանն իր կենդանության օրոք չի ընդունել երեխայի հայրությունը, և գործով ներկայացված ապացույցները ,սույն վեճի լուծման համար էական նշանակություն ունենալ չեն կարող, քանի որ ստույգ

չեն ապացուցում, որ հանգուցյալ Աշոտ Մանուկյանը կենդանության օրոք իրեն ճանաչել է Մարինա Ոսկանյանի հայրը, թե ոչ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝ գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տես՝ Ռազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարության-*

ների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Ստեփան և Անահիտ Մարությունների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված չեն Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճռի հիմքում դրված փաստերի թույլատրելիության և վերաբերելիության տեսանկյունից էական նշանակություն չունենալու հանգամանքը և չի տրվել դրանց հիմնավորումները, անտեսվել է վկաների կողմից տրված վկայությունները, միևնույն ժամանակ հիմնվելով գործով ներկայացված նույն ապացույցների և փաստերի վրա՝ կատարել է այլ եզրահանգումներ: Ուսումնասիրության առարկա են դարձել գործում ներկայացված ոչ բոլոր փաստերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ երեխայի ծնվելուց առաջ Վարդուհի Ոսկանյանը և Աշոտ Մանուկյանը բնակվել են համատեղ (դեռևս 1996 թվականից) և վարել են ընդհանուր տնտեսություն, միասին դաստիարակել և խնամել են երեխային: Բարեկամների, հարևանների և այլ անձանց մոտ Աշոտ Մանուկյանը և Վարդուհի Ոսկանյանը հանդես են եկել որպես ամուսիններ, իսկ Աշոտ Մանուկյանը որպես Մարինա Ոսկանյանի հայր (հատոր 1-ին, գ.թ.12-17, գ.թ. 20, 59-64, 73-74):

Սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Աշոտ Մանուկյանն իր բոլոր գործողություններով՝ հարևանների, բարեկամների մոտ, դպրոցում և բուժհաստատություններում բացահայտ ներկայացել է որպես Մարինա Ոսկանյանի հայր, կատարել է այնպիսի գործողություններ, որոնք հիմք են տալիս արձանագրելու, որ Աշոտ Մանուկյանը փաստացի Մարինա Ոսկանյանի նկատմամբ ճանաչել է հայրություն:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241[2]-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.03.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.12.2009 թվականի վճռին:

Դատավորներ՝

Խ. Անտոնյան
Ծ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Է. Հայրիյան
Տ. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիր՝ **Հրաչիկ ՍԱՐԳՍՅԱՆ**
Լեզվաոճական. խմբագիր՝ **Արմինե ՆԱԶԱՐՅԱՆ**
Տեխն. խմբագիր՝ **Արարատ ԹՈՎՄԱՍՅԱՆ**
Կազմի ձևավորող՝ **Գագիկ ՍԱՐՈՅԱՆ**

«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝(+374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am